

1700-³ Մ»³ Ի Ա^a 2001 Ա. Մáμ»É»³ Ý³ Ի³ Յ³ Ի³ Յ³
i³ ñáõÙ

Ê à ð ì Æ ð² ä à ð² ¼, ² ð² ð² ð² ð²
ø ð Æ è ì à ù³ ð Æ Æ² ù Æ Æ², ð ò ù² ð² ù 1700-² ð² ò² Æ²
î ù ð² Æ² ð² ð² ð ò Æ Æ ò ù ð² ð Æ è ì Æ² Æ² Æ² Æ²

2001 թ. Հայաստանայց առաքելական եկեղեցին, համայն հայութիւնն ու քրիստոնէական աշխարհը կը տօնեն Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը: Նշանակալի այս յոբելեանը վերաբնութեան գեղեցիկ մի առիթ է իւրաքանչիւր հայ հաւատացեալի համար:

2001 թ. ողջ ընթացքում Մայր աթոռ Սբ. Էջմիածնի հովանո ներքոյ տեղի կունենան բազմաթիւ միջոցառումներ՝ եկեղեցական հանդիսութիւններ, գիտաժողովներ, ցուցահանդէսներ ու մշակութային այլ յայտագրեր: Գրանցից մի քանիսն ունեն առանձնակի խորհուրդ ու նշանակութիւն:

1700-ամեակի շրջանակներում առանցքային նշանակութիւն ունեցող միջոցառումների ցանկ

1. Դեկտեմբերի 31, 2000

Յատուկ եկեղեցական արարողութիւն Մայր աթոռի Սբ. Էջմիածնում, որով ազդարարեց նոր դարասկիզբը եւ Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700-ամեակը:

2. Ապրիլի 24, 2001

Ուխտագնացութիւն Տէր Զօր՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց Կաթողիկոսի եւ ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարեանի գլխավորութեամբ:

3. Յունիսի 17, 2001

Տօն Սբ. Էջմիածնի Հայաստանայց առաքելական եկեղեցու աւանդա-կան այս տօնը Սբ. Գրիգոր Լուսաւորչի տեսիլքի յիշատակութեան տօնն է:

4. Յուլիսի 10-20, 2001

Երիտասարդական ուխտագնացութիւն Հայաստան: Դէպի Հայաստանի տարբեր սրբավայրեր եւ մասնաւորապէս Խոր Վիրապ՝ Էջմիածին- Երեւան ուխտագրնացութեանը կը մասնակցեն հազարաւոր երիտասարդներ Հայաստանից եւ սփիւռքից, ինչպէս նաեւ այլ քրիստոնէայ երկրներից:

5. Սեպտեմբերի 21, 2001

Էկումենիկ արարողութիւն Սբ. Էջմիածնում ի նշանատրումն Հայաստանի անկախութեան 10-րդ տարեդարձի՝ հանդիսապետութեամբ Ամենայն հայոց հայրապետի եւ մասնակցութեամբ քոյր եկեղեցիների հոգեւոր պե-տերի ու նրանց ներկայացուցիչների:

6. Սեպտեմբերի 22, 2001

Սբ. Միռոնի օրհնութիւն Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում:

7. Սեպտեմբերի 23, 2001

Երեւանի Սբ. Գրիգոր Լուսաւորչի Մայր եկեղեցու օծումը:

8. Սեպտեմբերի 30, 2001

Տիպիկոպոսական ձեռնադրութիւն:

9. Նոյեմբերի 4, 2001

1700-ամեայ յոբելեանական տօնակատարութիւններ-ի հանդիսատր փակում:

2001 թ. կարեւորագոյն միջոցառումներից է փետրարի 19-ից 21-ը Մայր աթոռ Սբ. Էջմիածնում կայանալիք

ԵՐԵՒԱՆ, 4 ՅՈՒՆԻԱՐԻ, ՆՈՅՏԵԱՆ ՏԱՊԱՆ:
Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակի տօնակատարութիւնների սկիզբն ազդարարեց 2000 թականի դեկտեմբերի 31-ի գիշերը Խոր Վիրապում, Սբ. Պատարագի մատուցմամբ: Ներկայ էին Հայաստանայց Առաքելական եկեղեցու ներկայացուցիչները՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորութեամբ, Սփիւռքի թեմերի առաջնորդները: Պատարագից յետոյ Գրիգոր Լուսաւորչի չարչարանաց վիրապից դուրս բերեց կանթեղի լոյսը, այն լոյսը, որով Լուսաւորիչը 1700 տարի առաջ ցրեց հեթանոսական խաւարը: «Եկաւ ժամանակ, երբ երկրում նորից տիրեց խաւարը, եւ Լուսաւորչի կանթեղի լոյսը մի քիչ թուլացաւ, սկսեցին գործել չար գործեր, քանի որ խաւարը չարի իշխանութիւնն է, սակայն ժամանակն է պայծառացնելու այդ լոյսը, հարկաւոր է լոյսով ու հաւատով նայել ապագային՝ անցեալը որպէս բարի օրինակ մեր առաջ ունենալու», - ընդգծեց Վեհափառ հայրապետը: Հայ Առաքելական եկեղեցու Հիւսիսային Ամերիկայի թեմի առաջնորդ Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանը նշեց, որ Լուսաւորչի կանթեղից վառած լոյսը տարւելու է Ամերիկա, «վառելու է հայկական եկեղեցիներում, եւ իւրաքանչիւր ամերիկահայ գալու է այդ լոյսը տանելու, այդ լոյսով ջերմանալու»: Հոգեւոր հայրերը հաւատում են, որ այսուհետ Աստուծոյ օգնութեամբ մեր երկրի վրայ կիշխի միայն Լոյսը, քանզի Լոյսն ինքը Աստուծոյ միածին որդին է, որին փառաբանել են մեր նախնիները՝ «Առաւօտ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեայ»: Վեհափառն այցելեց Խոր Վիրապից Էջմիածին տանող ճանապարհի գիւղերն ու քաղաքները, ուր հաւաքւած հաւատացեալ ժողովուրդը Լուսաւորչի կանթեղից վերցրած լոյսը տանում էր տուն՝ դրանով հոգեպէս ջերմանալու, եւ հաւատալով, որ այն իրենց միայն բարիք կը բերի նոր տարում, նոր դարում, նոր հազարամեակում: Էջմիածնում մատուցած Սբ. Պատարագից յետոյ Լուսաւորչի կանթեղի լոյսը քառասուն կոյսերի ուղեկցութեամբ տեղափոխուեց Երեւան, եւ վառեց Հանրապետութեան հրապարակում տեղադրւած ջահը: 2001 թականի առաջին օրայ միջոցառումներն աւարտեցին հանրապետութեան նախագահի՝ ժողովրդին ուղղւած խօսքով եւ Վեհափառ հայրապետի օրհնութեամբ: 04/01/01

Երիտասարդ միաբանների ժողովը՝ Ամենայն հայոց հայրապետի նախագահութեամբ: 2001 թ. կը նշանատրուի նաեւ Ամենայն հայոց հայրապետի հովապետական այցելութիւններով Հայաստանայց առաքելական եկեղեցու բոլոր թեմեր: Հորելեանական տարւայ ընթացքում կօծեն նոր եկեղեցիներ, կիրականացեն ծրագրեր՝ ուղղւած քրիստոնէական դաստիարակութեան ամրապնդմանը: Գեղեցիկ ու հետաքրքիր միջոցառումներից է 48 վանքերի շրջակայքում իրականացելիք ծառատունկը:

ՅԻՍՈՒՄ ԶՐԻԱՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԹԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ՄԱՏՈՒՑԻԵՑ ՊԱՏԱՐԱԳ՝ ԸԱՆԴԻՍԱՊԵՏՈՒԹԵԱՄԲ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ԵՐԵՒԱՆ, 8 ՅՈՒՆԻԱՐԻ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Յունարի 6-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում հայ եկեղեցու 5 տաղաւար տօներինց ամենագլխաւոր՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան հրաշափառ տօնի առիթով մատուցեց Սբ. Պատարագ՝ հանդիսապետութեամբ Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի: Հընթացս Սբ. Պատարագի ընթերցեց Ամենայն Հայոց կաթողիկոսի սրբատառ կոնդակը՝ նւիրած Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեայ յրելեանին: Հայրապետական կոնդակում մասնաւորապէս նշում է. «... Մենք մեծաթիւ ժողովուրդ չենք, բայց մեր հաւատը՝ գործերի փոխւած, դարձրել է մեզ մեծագործ ժողովուրդ, հաւատի գործերով մենք մարմնաւորել ու հաւաստել ենք մեր սերն առ Աստուած, հաւատով մենք մեծ ենք՝ որպէս Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցի, որ հաւատի կենդանի գործերով դէպի երկինք բարձրացող դարձի մի ճամփայ ունի: Հայ Եկեղեցին հայ ժողովուրդն է՝ քրիստոնէական սուրբ հաւատով միասնական, ինքն իրեն հայ եկեղեցիով ճանաչող ու արտայայտող:... Չկայ մեզ մահ, քանի դեռ մեր գործերում ապրում է մեր հաւատը, քանի դեռ հայոց պատմութեան ընթացքով յաղթականօրէն անցնում է լուսեղէն թափորը Հայ Եկեղեցու՝ ճառագելով հաւատ ու խմորելով հոգի:... Սրբագրենք մեր պատմութիւնը աղճատումներից, շտկենք ժամանակի հարկադրանքները, Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութիւնների միջեւ տարածայնութիւնների հարթումով ձեռնամուխ լինենք Հայ Եկեղեցու ներքին բարեկարգութեանը, 2000-ամեայ քրիստոնէական ժառանգութեամբ գործուն մասնակցութիւն բերենք ազգերի, կրօնների ու եկեղեցիների համերայրութեանը, քայլենք մեր նւիրական իղձերի իրականացման վճռականութեամբ՝ որպէս մէկ եկեղեցի, մէկ պետութիւն եւ ազգ:... Թող մեր սրտերը այսօր տրոփեն հայոց Բերդեհեմ Սուրբ Էջմիածնի աւետաբեր զանգերի կանչող դողանջով եւ առ Աստուած ձայնեն մեր հողում հնչած բիւր աղօթքների երկնահաս խօսքով, թող մեր մտքերը թափանցեն խորքը ժամանակների՝ իր մեծութեան մէջ ամբողջապատկեր տեսնելու համար յաւերժահայեաց սուրբ Մատեաց դիմաց հրաշակերտած խորին խորհուրդը հայոց մեծ դարձի՝ նորոգ հաւատով եւ նորոգ կեանքով այն փոխանցելու նոր սերունդներին»: Վեհափառ հայրապետն իր կոնդակում նաեւ ողջունեց Հայ Առաքելական եկեղեցու նւիրապետական աթոռների գահակալներին՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսին, Երուսաղէմի հայոց պատրիարք Թորգոմ

արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոնստանդնուպոլսի հայոց պատրիարք Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, հայ եկեղեցու զինուորեալ ողջ հոգեւոր դասին, Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւնների նախագահներին, պետական այրերին եւ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի բարեպաշտ հաւատացեալ ժողովրդին: Սբ. Պատարագի աւարտից յետոյ տեղի ունեցաւ Ջրօրհնէքի արարողութիւն՝ իբրեւ Քրիստոսի մկրտութեան յիշատակութիւն: Օրհնած ջուրը հայ քրիստոնէաները տարան իրենց տները՝ հաւատալով, որ Փրկչի մկրտութեան ջուրը յաջողութիւն կըբերի իրենց ընտանիքներին, կըբուժի հիւանդներին: Սբ. Պատարագին եւ Ջրօրհնէքի արարողութեանը իրենց ներկայութիւնն էին բերել Հայաստանի Ազգային ժողովի նախագահ Արմէն Խաչատրեանը, վարչապետ Անդրանիկ Մարգարեանը, Երեւանի քաղաքապետ Ալբերտ Բազէյեանը, այլ բարձրաստիճան պաշտօնեաներ, Հայ Առաքելական եկեղեցու սպասաւորներ, Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամներ, Հայաստանում միջազգային բարեսիրական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ, Հայաստանում հաւատարմագրած օտարերկրեայ դիւանագէտներ: Հայաստանում Ուկրաինայի արտակարգ եւ լիազօր դեսպան Ալեքսանդր Բոժկօն «Նոյեան տապանի» թղթակցի հետ գրոյցում այն կարծիքը յայտնեց, որ 2001 թականը յատուկ տարի է հայերի եւ ոչ հայերի համար, որովհետեւ 1700-ամեակը մեծ իրադարձութիւն է բոլոր քրիստոնէաների, այդ թում նաեւ ուկրաինացիների համար, որոնց հետ հայերը լաւ յարաբերութիւններ ունեն:

Ձեռամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի քահանայական պաշտօնի կոչւեցին 7 սարկաւազներ

ԷՋՄԻԱԾԻՆ, 15 ՅՈՒՆԻԱՐ, ՆՈՅԵԱՆ ՏԱՊԱՆ: Կիրակի, յունարի 14-ին, Մայր աթոռ Սբ. Էջմիածնում ձեռամբ Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի քահանայական սրբազան պաշտօնի են կոչել 7 սարկաւազներ: Իբրեւ Ամենայն հայոց կաթողիկոս սա Վեհափառ հայրապետի անդրանիկ քահանայական ձեռնադրութիւնն էր: Ձեռնադրութիւնից յետոյ Հայոց հայրապետը սրբա-լոյս միւռնով օժել է ընծայացուների ճակատները, աջ եւ ահեակ ձեռքերի ափերը՝ միաժամանակ ուխտեալներից իրաքանչիւրին կնքելով նոր անւամբ: Արտակ սրկ. Սահակեանը անւանակոչել է Աւետիս քահանայ, Հայկ սրկ. Պողոսեանը՝ Սկրտիչ քահանայ, Բաբկէն սրկ. Նանեանը՝ Վազգէն քահանայ, Արման սրկ. Սարոյեանը՝ Գեւորգ քահանայ, Մամուէլ սրկ. Կիրակոսեանը՝ Խորէն քահանայ, Արսէն սրկ. Տատուրեանը՝ Մամբրէ քահանայ եւ Աշոտ սրկ. Ղազարեանը՝ Վիրապ քահանայ: Նրանցից մի քանիսն արժանացել են 20-րդ դարի հայոց նւիրեալ հայրապետների անունները կրելու շնորհին՝ Վեհափառի այն համոզմամբ, որ նոյն նւիրումով ու սիրով պիտի իրենց ծառայութիւնը մատուցեն ժողովրդին ու մայր եկեղեցուն: Մայր աթոռի հոգեւորականների շարքերը համա-լրրուեցին չորս նորաօժ արեղաներով եւ երեք ամուսնացեալ քահանաներով:

Իրանահայ Համայնք

Իրանահայ մարզիկների նոր նաճումը. - Ամանորեան տօների ընթացքում ասարուեց Իրանի «Թեհրան» նահանգի կրտսերների բասկետբոլի առաջնության մրցոյթները, որում չեմպիոն չանաչեց «Հայ Մշակութային Արարատ Կազմակերպութեան» կրտսերների խումբը: Մոյն խումբը եզրափակիչ մրցոյթում յաղթելով (41-39) «Շահրէ Ռէյ» խմբին, կանգնեց առաջին պատանդանի վրայ:

Մրցոյթների ասարտից յետոյ ՀՄԱԿ-ի բասկետբոլի անդամ Քաջանի Արզումանեանը համարեց լաւագոյն խաղացող, իսկ Գաիթ Մոմճեանը՝ խաղերի յայտնաբերութիւնը:

Նկարչութեան ցուցահանդէս ԹՀԱ-ում. - Վերջերս Թեհրանի Հայ Ակումբում բացեց մի նկարչութեան ցուցահանդէս, որտեղ ցուցադրութեան էին դրել մի շարք երիտասարդ նկարիչուհիների աշխատանքները: Բացման օրը ներկայ էր Թեհրանի թեմի առաջնորդ գերաշնորհ Տէր Մեայուհ եպիս. Մարգսեանը:

Մոյն ցուցահանդէսում ներկայացման էր դրել՝ Անետ Արնուսեանի, Անի Իսաղուլեանի, Անի Նուասարդեանի, Անի Ամիրեանի, Թեմի Ամիրեանի, Ներիկ Ագալբասի, Ռուբինա Պօղոսեանի, Էլին Յակոբեանի, Առլէն Յովսէփեանի, Այիդա Կիրակոսեանի, Անաշէ Մելիքեանի, Նարինէ Վարդանեանի, Մելինա Թովմասեանի, Անետ Մարիադեանի, Լուիզ Մարիադեանի, Արտեմիս Բաղդասեանի եւ Ջեսիկա Դարիքեանի ու նաեւ պարսկուհիներ՝ Մելիդէ Ֆարաջօլլահիի, Մոճգան Իչիի, Մոճգան Ջհանշահիի, Մեհրաք Նադիմիի, Նեդա Լաշարիի, Մարիամ Շէյխիի եւ Ռահել Մոքիի գործերը: Հարկ է նշել վերոյիշեալ բոլոր մասնակիցների նկարչութեան դասատուն էր տիկ. Ծաղիկ Յովսէփեանը:

Ցուցահանդէսը արժանացաւ արեստասերների հաւանութեանը:

Լրագրութիւնը՝ Անի Նազարեանցի

Մ.Գրիգոր Լուսաւորիչ երգչախումբի երոյթը տեղի ունեցաւ Թ Մ. Աստուածածին եկեղեցում. - Մոյն թականի յունարի 16-ին տեղի ունեցաւ վերոյիշեալ երգչախմբի երոյթը: Երգչախումբը որին մասնակցում էին բոլոր եկեղեցիների երգչախմբերի ընտրեալ երգիչուհիները, ղեկավարում էր մայրեստրո Միհրան Դազէլեանը: Օրուայ բացման խօսքով հանդէս եկաւ տիկ. Գոհար Մարիքեկեանը: Երգչախմբին ընկերակցում էր դաշնակահար տիկ. Լուսինէ Չոլաքեանը:

Ծրագիրը ամբողջութեամբ բաղկացած էր հոգեւորական երգերից: Երոյթի ընթացքում ասումն-քեցին Արմինէ Մուքիսեանը եւ Ժակ Յակոբեանը ու նաեւ մեներգեց Նարրէ Չոլաքեանը: Վերջում թեմիս բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տէր Մեայուհ Մարգսեանը նախ բարի մաղթանքներ յայտնեց երգչախմբին եւ ներկաներին ու ապա յուշաներ յանձնեց երգչախմբի խմբավարին:

Լրագրութիւնը Թամիկ Քելչիշեանցի

Իրանահայ մարզիկների թեթևատղետիկայի մարզում նոր նաճումները. - Վերջերս Թեհրանի թեթևատղետիկայի Ֆեդերացիան, «Շահիդ Քելչարի» մարզաւանում կազմակերպել էր թեթևատղետիկայի մրցոյթներ, որտեղ մասնակցել էր Հ. Մ. «Արարատ» Կազմակերպութեան պատկան մարզաբաժնի խումբը:

Հայ մարզիկները հիանալի դրսևորեցին իրենց կարողութիւնները: 800 եւ 1000 մ. վազերում, Էդուարդ Մանգասարեանը գրաւեց առաջին տեղը, իսկ 60 մ. վազում Նարրէյ Օրուջեանը եւս առաջին հանդիսացաւ: Նարրէյ Օրուջեանը եւ Շարա Դադիմեանը 200 մ. վազում, հերթաբար գրաւել են երկրորդ եւ երրորդ տեղերը: 600 մետր Պատանեկան վազում Նարրէյ Օրուջեանը նոյնպէս կանգնել է պատանդանի վրայ եւ այս անգամ երկրորդ տեղում: 800 մ. երիտասարդական վազում Արին Մելքոն Արգարը առաջին է հանդիսացել:



Իրան

Պանթրոքիզմի հակաիրանական գրգռումները (Իրան օրաթերթ, 02. 01. 2001). - Ադրբեջանի հանրապետութեան անկախութեան տարեդարձին, պանթրոքիստները որոշ համահաւարների ժամանակ հակաիրանական եւ անջատողական մտայնութիւն ցուցաբերեցին: «Ազրբայջան»-ի անուան մշակութային միութեան Էզմիրի մասնաճիւղի նախագահ՝ Քամալ Բարա Աքերը այդ համագումարներից մէկում պահանջեց Իրանի Ադրբեջան նահանգների անջատումը եւ նրանց Ադրբեջանի հանրապետութեան միացումը:

Հայաստան

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Ամանորի ներքեւ հայ մանուկների (ՀՀ օրաթերթ, 16. 12. 00). - Դեկտեմբերի 15-ին Ն.Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի հրատեղով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում տեղի ունեցաւ Հայաստանի թեմակալ առաջնորդների եւ հանրապետութեան մարզպետների հանդիպում:

Ամանորի նախաշեմին թեմակալ առաջնորդների եւ մարզային իշխանութիւնների մնամատիպ հանդիպումը Սբ. Էջմիածնում դառնում է աւանդական: Գրեթէ մէկ տարի առաջ եւս հոգեւոր եւ պետական այրերի համատեղ ջանքերով մշակուեցին եւ յաջողութեամբ իրականացուեցին ամանորեայ եւ Մուրք ծննդեան տօնական միջոցառումներ: Ողջունելով ներկաներին, Նորին Սրբութիւնը տեղեկացրեց, որ այս տարի Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը հանդէս է գալիս «Նոր տարին՝ հայ մանուկներին» Ամանորի նախաձեռնութեամբ, որը նախատեսում է տօնական հանդէսներ իրականացնել հանրապետութեան բոլոր մարզերում:

«Մեր նպատակն է մանուկների համար ուրախալի եւ յիշարժան դարձնել Նոր տարին ու Սբ. Ծնունդը, յատկապէս, երբ գալիք տարին առանձնակի նշանակութիւն ունի բոլորիս համար», - ասաց Վեհափառ հայրապետը, նշելով, որ ծրագրի իրականացման համար Մայր Աթոռը

Լուրեր

որոշակի գումար է առանձնացրել իրաքանչիւր մարզի եւ Երեւանի համար: Այդ նպատակով ԱՄՆ Արեւելեան թեմի միջնորդութեամբ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնին 100 հազար դոլար են յատկացրել ամերիկահայ բարերարներ տէր եւ տիկին Գիլյամիրեանները: Ակնկալում են նաեւ լրացուցիչ միջոցներ այլ բարերարների կողմից:

Հանդիպման ընթացքում հոգեւոր եւ պետական այրերը քննարկեցին մանուկների Ամանորը առաւել հետաքրքիր ու գրաւիչ դարձնելուն նիւրաժ հարցեր:

Վեհափառ հայրապետը հիւրերին ներկայացրեց նաեւ Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակման 1700-ամեակին նիւրաժ յորելեանական տօնակատարութիւնների եկեղեցական ծրագրերը:

Իրան-Հայաստան գազատարի կազմակերպչական փաստաթղթերը ստորագրած են (Ազգ օրաթերթ 15. 12. 00).- «Ազգը» վստահութիւն ներշնչող աղբիւրներից տեղեկացել է, որ ստորագրել են Իրան-Հայաստան գազամուղի շինարարութեան կազմակերպչական վերջին փաստաթղթերը: Յիշեցնենք, 141 կմ երկարութիւն ունեցող խողովակաշարի 100 կմ-ը կանցնի Իրանի տարածքով, 41 կմ-ը՝ Հայաստանի: Շինարարական աշխատանքները, ըստ գրաֆիկի, կը սկսեն 2001 թ. յունւարից: Դրանք կարող են մէկ երկու ամսով հետաձգուել, եթէ յունւար-փետրւարն Իրանի հիւսիսում խստաշունչ ձմեռ լինի: Ամէն դէպքում, ըստ գրաֆիկի, արդէն 2001 թ. սեպտեմբերին գազամուղը կը հասնի Հայաստանի հարաւային սահմանագլուխ, որից յետոյ կը սկսեն շինարարական աշխատանքները Հայաստանի տարածքում:

Մեր ստացած լուրը ճշտելու նպատակով դիմեցինք ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպան Մոհամմադ Ֆարիադ Քոլէյնիին, որը հաստատեց «Ազգի» տեղեկութիւնը միեւնոյն ժամանակ գազատարի կառուցման շուրջ տալով որոշ վերապահումներ:

Անդրադառնա՞նք մի խնդրի, որը տարբեր աստիճանի հայ պաշտօնեաներ շահարկում են : Պատճառաբանութիւններ են բերում, թէ

իրանական գազի գինը քանկ է: Միանգամից նշեք համաշխարհային շուկայում չկայ «գազի գին» տերմինը: Եթէ, օրինակ, նախի դէպքում գործում են համաշխարհային գներ, որոնք կարգաւորում է նախարդինահանող երկրների կազմակերպութիւնը՝ ՕՊԷԿ-ը, ապա գազի պարագայում գործում է երկկողմ պայմանաւորաւծութիւնների մեխանիզմը: Օրինակ, Ռուսաստանը Բելառուսին գազ է վաճառում 1000 խմբ 15 դոլարով, գերմանիային՝ 102, Հայաստանին՝ 53, եւ այլն: Այնպէս որ, տեղին չէ ասել, թէ իրանական գազի գինը քանկ է: Ընդհակառակը, իրանական գազը կարող է Հայաստան հասնել համեմատաբար էժան գներով:

Միջազգային

Ըստ «Նիւ Եօրք թայմսի»՝ միջազգային բանագնացները ցանկանում են ԼՂ-ի հարցը փողով լուծել (Ազգ օրաթերթ 19. 12. 00).-«Նիւ Եօրք թայմս»-ը իր անցած շաբաթային համարում գրել է, թէ Լեւոնային Ղարաբաղի հակամարտութիւնը կարգաւորելու նպատակով միջազգային բանագնացները փորձում են օգնութեան այնպիսի փաթեթ կազմել, որը կը նպաստի երկու հակամարտագոյնի հայերի ու աղբրեջանցիների հաշտեցմանը: Ըստ թերթի, արեւմտեան դիւանագէտներն ասում են, որ երկու երկրների ղեկավարներն էլ կարող են քաղաքական լուրջ խնդիրների առաջ կանգնել, եթէ այնպիսի տալարութիւն ստեղծի, որ նրանք չափազանց շատ զիջումներ են կատարում: «Այդ իսկ նպատակով բանագնացները Հայաստանի ու Աղբրեջանի վերականգնման մի քանի միլիարդ դոլոր օգնութեան փաթեթ են մշակում, որպէսզի խաղաղութեան պայմաններն աւելի ընդունելի լինեն երկու ժողովուրդների համար», գրում է թերթը:

Ուրուգայի խորհրդարանը մինչեւ տարեկերջ կը քննարկի Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւը (Ազգ օրաթերթ 12. 12. 00).- Ուրուգայի խորհրդարանը մինչեւ տարեկերջ կը քննարկի հոկտեմբեր ամսին Մեմատի կողմից ընդունւած Հայոց ցեղասպանութեան

ճանաչման բանաձեւը: Խորհրդարանի հաստատումից յետոյ Հայոց ցեղասպանութիւնը դատապարտող բանաձեւն իրականացնող կըստանայ: Արգենտինայում Թուրքիայի դեսպան Օրիան Եիզիբբաշը, որ իրականացնում է Թուրքիայի դեսպանի պարտականութիւնները նաեւ Ուրուգայում, ժամանել է Մոսկուիդէ: Դեսպանը խօսել է օրինագծի ընդունման անցանկալիութեան մասին:

Թուրքական «Միլիթերը» տագնապում է Հայոց ցեղասպանութեան օրինագծի «յաղթարշաւից»: Նշում է, որ 3 միլիոնանոց Ուրուգայի 50-հազարանոց հայկական համայնքը ազդեցիկ դեր ունի Ուրուգայի քաղաքական, սոցիալ-տնտեսական եւ մշակութային ոլորտներում եւ օրինագծի հաստատումը խիստ հաւանական է: «Միլիթերը» կանխատեսում է հայկական օրինագծերի առաջըջաշում նաեւ լատինամերիկեան միւս երկրներում:

Ժամանակն աշխատում է ի վնաս Անկարայի .- Ինչպէս արդէն տեղեկացուել է, Թուրքիայի արտգործնախարարութիւնը կառավարութեան քննարկմանն է ներկայացրել թուրք-հայկական յարաբերութիւնների կարգաւորմանն ուղղւած առաջարկների փաթեթ: Նախագիծը նպատակ ունէր Երեւան-Անկարա յարաբերութիւնների կարգաւորումով կանխել հայկական հարցի շուրջ ծաւալող գործընթացները: Ըստ «Միլիթերի», կառավարութիւնը վերապահումով է մօտեցել այս նախաձեռնութեանը: Վարչապետը մտավախութիւն է յայտնել, որ հայ-թուրքական յարաբերութիւնների բարելաւումը կը հարւածի Բաքւի հետ Անկարայի յարաբերութիւններին՝ նշելով, որ այս խնդրի շուրջ պէտք է նախ բանակցութիւններ վարել Աղբրեջանի հետ: Ըստ «Միլիթերի», Անկարան պէտք է շտապողակաւորութիւն հանդէս բերի, քանի որ «ժամանակն աշխատում է ի վնաս Անկարայի»: «Մասնաւորապէս յունւարի 18-ին հայոց ցեղասպանութիւնը ճանաչեց Ֆրանսիայի խորհրդարանի կողմից, իսկ փետրւարին հաւանական է, որ այն կրկին դրի ԱՄՆ քաղաքական օրակարգում:

«Իրանը հզոր ներուժով տերուփին է եւ չի կարող դուրս մնալ տարածաշրջանային որեւէ գործընթացից»

**ԻԻՀ-ում 22 Եսդան Գեղամ
Ղարիբզանեանի հարցազրույցը «ՎԿԳ»
օրաթերթին**

Յունւարի 14-ին լրացաւ երկու տարին, ինչ Իրանի Իսլամական Հանրապետութիւնում Հայաստանի Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան նշանակեց Գեղամ Ղարիբզանեանը: Սովորաբար դիւանագէտները նախընտրում են տարեկան արձակուրդն անցկացնել ամռան ամիսներին: Պրն. Ղարիբզանեանը ձմեռն է «նախընտրել», որովհետեւ «Նոր տարւան մօտ եւ հետագայ մէկ-երկու շաբաթներին դիւանագիտութիւնը համեմատական դադար է ապրում»: Այս օրերին դեսպանը Երեւանում էր, եւ պատեհ առիթն օգտագործելով նրանից խնդրեցինք որոշ պարզաբանումներ տալ մի քանի հարցերի:

- Պրն. Ղարիբզանեան, յայտնի է, որ մինչեւ ԻԻՀ-ում Ձեր դեսպան դառնալը դեսպանութեան եւ իրանահայ համայնքի փոխյարաբերութիւնները, մեղմ ասած, անսովոր չէին: Մեր հարցը չի վերաբերում նրան, թե ինչու եւ ի՞նչ պատճառներով էր առաջացել նման իրավիճակ: Մեզ հետաքրքրում է՝ ինչպիսի՞ն են այսօր դեսպանութիւն-համայնք փոխյարաբերութիւնները: Հասկանալի է, Ձեր եւ ողջ դեսպանութեան առաջնային խնդիրը Հայաստանը Իրանում ներկայացնելն է:

Դեսպանատունն իրանահայ համայնքի հետ հաւասար, ներդաշնակ յարաբերություններ է պահպանում՝ հիմնած փոխադարձ յարգանքի վրայ: Ինչ վերաբերում է իրանահայութեան տնտեսական ներուժին, չէի ասի, որ իսկապէս հզոր ներուժ կայ: Ինչպէս արեւելեան բոլոր երկրներում, Իրանի Իսլամական Հանրապետութիւնում (ԻԻՀ) նոյնպէս որոշակի միգրացիա է տեղի ունեցել, այդ թում եւ հայ համայնքից: Ճիշտ է, մտաւոր ներուժը մնացել է, եւ ես հիացած եմ մտաւոր ներուժով, բայց շատ գործարարներ այսօր դրսում են:

Ամեն պարագայում, ԻԻՀ-ում հայ համայնքը ներդաշնակ է գործում, որովհետեւ հիմնականում միատարր համայնք է: Թեհրանում ընտրեց հոգեւոր նոր առաջնորդ՝ Սեպուհ Եպիսկոպոս Սարգսեանը, որը բաւական ակտիւ գործունէութիւն է ծաւալում: Աւելի քան մէկ տասնամեակ ընդմիջումից յետոյ տեղի ունեցան Պատգամաւորական Ժողովի ընտրութիւններ: Նոր Պատգամաւորական Ժողովը փորձում է շատ ակտիւ աշխատել, ունեն ծրագրեր: Մենք, որպէս դեսպանութիւն, հայ համայնքի հետ նորմալ յարաբերութիւններ ունենք:

1999 թ. Յունւարի 14-ին նախագահ Քոչարեանի հրամանագրով նշանակուեցիք ԻԻՀ-ում ՀՀ դեսպան: Ի՞նչ է արել երկու տարիներին, ինչպէ՞ս կը գնահատէք Հայաստան-Իրան յարաբերութիւնների մակարդակը:

Նկատելի առաջընթաց կայ, եւ առաջին հերթին ուզում եմ շեշտել Իրան-Հայաստան գազատարի կարելորո-

թումը, որի կառուցումով մենք ոչ միայն տնտեսական խնդիրներ ենք լուծում: Խողովակաշարը մեզ համար լուստեսութիւն սկզբընաւորելու նշանակութիւն ունի: Կան մի շարք լուրջ տնտեսական առաջարկներ, որոնք մինչ այդ միշտ եղել են «գրուողական»



մակարդակի վրայ՝ Արաքս գետի վրայ

ՀԷԿ-ի համատեղ կառուցում, Քաջարանի թունել: Յունւարի 23-25-ին Երեւանում տեղի կունենայ Իրան-Հայաստան միջկառավարական յանձնաժողովի նիստ, եւ այս հարցերը կը քննարկեն: Որպէս անձնատրութիւն սիրում եմ հստակութիւն եւ կարծում եմ պէտք է քայլեր մի՞նչում եւ մաքսիմում ծրագրելով: Այս տարւայ ծրագիր եմ համարում Իրան-Հայաստան գազատարի կառուցումը եւ գազատարի կառուցումից բխող տնտեսական զարգացման խնդիրները: Ցանկացած բարձր մակարդակի քաղաքական, եղբայրական, բարեկամական յարաբերութիւնները եթէ իրենց ետեւից չտանեն տնտեսականը, ապա կարող են փոփոխութեան ենթարկել: Եթէ երկու հարեւան պետութիւնները տնտեսապէս փոխկապակցեն, ապա քաղաքականութիւնը ստիպած կը լինի տնտեսական օրէնքներին համահունչ լինել: Կարծում եմ, ԻԻՀ-ի հետ յարաբերութիւններում պէտք է յիշենք մէկ բան. Իրանը հզոր ներուժ ունեցող տերութիւն է եւ չի կարող դուրս մնալ տարածաշրջանային իւրաքանչիւր գործընթացից՝ լինի Պարսից ծոց, Կասպից ծովի աւազան, Հարաւային Կովկաս: Իրանը միշտ պատրաստակամ է եղել օժանդակելու իր հարեւանին: Այս առումով պիտի նշեմ ՀՀ պաշտպանութեան նախարար Սերժ Սարգսեանի չափազանց յաջող այցելութիւնը Թեհրան եւ ամենաբարձր մակարդակով բանակցութիւնները:

Հաւանաբար փետրարին ԻԻՀ-ում կանցկացնեն Հայաստանի մշակութային օրեր ամենաբարձր մակարդակով: Իրանցիներին ներկայանալու ենք երեք սերունդների լուսագոյն նկարչների ցուցահանդէսով, այդ թում եւ Փարաջանովով: Նախատեսում ենք ակտիւ համագործակցութիւն Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակը եւ ԻԻՀ նախագահ պրն Խաթամիի առաջարկով եւ ՄԱԿ-ի ընդունած 2001 թ. քաղաքակրթութիւնների երկխօսութեան տարի հռչակելը միմեանց կապակցելով, քանզի քաղաքակրթութիւնները գալիս են այս տարածաշրջանից, եւ Իրանը, եւ Հայաստանը այդ երկխօսութեան մէջ իրենց ասելիքն ունեն:

-Պրն Ղարիբզանեան, ցաւով պիտի փաստենք, որ Էջմիածնի եւ Անթիլիասի միջեւ բարդ յարաբերութիւններ են ստեղծուել: Չլինի՞ իրանահայ համայնքի համար որոշ անհարմարութիւններ առաջանան՝ 1700-ամեակի տօնակատարութիւնների շրջանակներում Հայաստան այցելելու

Միացեալ Ազգերի Կազմակերպութիւն

ՄԱԿ-ը պաշտօնապես ստեղծել է 1945թ. հոկտեմբերի 24-ին՝ ընդգրկելով 51 անդամ երկրներ: Այսօր այդ թիւն աճել է մինչեւ 185:

ՄԱԿ-ը չորս հիմնական նպատակ ունի.

- ամբողջ աշխարհում խաղաղութիւն պահպանել

- ազգերի միջեւ բարեկամա-կան յարաբերութիւններ հաստատել

- համատեղ ջանքերով օգնել աղքատ մարդկանց՝ բարելաւելու իրենց կենսապայմանները, յաղթահարելու սովը, հիւանդութիւններն ու անգրագիտութիւնը եւ յարգանք սերմանել միմեանց իրաւունքների եւ ազատութիւնների հանդէպ

- միահամուռ օգնել ազգերին՝ այս նպատակներին հասնելու հա-մար:

ՄԱԿ-ը իր գործունէութիւնը ծաւալում է ամբողջ աշխարհով մէկ իր 6 հիմնական մարմինների միջոցով: Դրանք են.

- Գլխաւոր ասամբլեան
- Անվտանգութեան խորհուրդը
- Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը
- Հոգաբարձուների խորհուրդը
- Միջազգային դատարանը
- Զարտուղարութիւնը

Բոլոր այս մարմինները գտնուում են Նիւ Եօրքի Կենտրոնական գրասենեակում, բացառութիւն է կազմում Միջազգային դատարանը, որը գտնուում է Հասագայում (Նիդեռլանդներ):

ՄԱԿ- ին կից կան 14 այլ կազմակերպութիւններ, որոնք համարում են մասնագիտացած գործակալու-թիւններ: Նրանց գործունէութիւնը առնչւում է այնպիսի տարբեր բնագաւառների հետ, ինչպիսիք՝ են առողջապահութիւնը, գիւղատնտեսութիւնը, փոստային կանոնակարգը եւ եղանակը: Դրա հետ միասին գոյութիւն ունեն 35 այլ ծրագրեր, հիմնադրանքներ եւ մարմիններ, որոնք տարբեր բնագաւառներում իրենց պարտաւորութիւններն ունեն: Այդ մարմինները եւ ինքը՝ ՄԱԿ-ը, իր մասնագիտացած ծրագրերի հետ մէկտեղ, կազմում են ՄԱԿ-ի համակարգը:

ՄԱԿ-ի Գլխաւոր քարտուղարը նշանակւում է 5 տարի ժամկետով Անվտանգութեան խորհրդի երաշխաւորութեամբ:

Ստեղծման պահից ՄԱԿ-ը ունեցել է ընդամենը 7 Գլխաւոր քարտուղար.

- Տրիգլէ Լի (Նորուեգիա) 1946-1952
- Դազ Համարշեօլը (Շեդիա) 1953-1961
- Ու Թանտ (Բիրմա, այժմ՝ Միանմար) 1961- 1971
- Կուրտ Վալդիսայն (Աւստրիա) 1972- 1981
- Խալիեր Պերես դէ Կուելեար (Պերու) 1982-1991

- Բուտրոս Բուտրոս- Գալի (Եգիպտոս) 1992-1996
- ՔոՖի Անան (Գանա) 1997

ՄԱԿ-ի անդամ 185 երկրներն իրենք են վճարում այն ամենի համար, ինչ ՄԱԿ-ն անում է: Այն որեւէ այլ եկա-մրտի աղբիւր չունի:

ՄԱԿ-ը երկու քիչէ ունի՝ կանոնաւոր քիչէ, որը Ֆինանսաւորում է Նիւ Եօրքում գտնուող Զարտուղարութեան բուն գործունէութիւնը եւ աշխարհ-ով մէկ սփռած

տարածա-շրջանային

գրասենեակների ծախսերը, եւ Խաղաղապահ քիչէն, որը Ֆինանսաւորում է տար-բեր տիպի գործունէութիւններ, շատ յաճախ ամբողջ աշխարհի «թէժ կէտերում»: Անդամ երկր-ները երկու քիչէներում էլ պետք է պարտադիր ներդրումներ կատարեն: Անդամները վճարում են համաձայն բոլորի կողմից ընդունւած գնահատման սանդղակի: Այդ սանդղակը հիմնւած է երկրի վճարումակութեան, ազգային եկամտի եւ բնակչութեան



թի վրայ: Օրինակ՝ ԱՄՆ-ը 25 տոկոս, Ճապոնիան 15,6 տոկոս, Գերմանիան 9 տոկոս, Ֆրանսիան 6,4 տոկոս, Մեծ Բրիտանիան 5,3 տոկոս, Իտալիան 5,2 տոկոս եւ Ռուսաստանի Դաշնութիւնը 4,3 տոկոս: Այս բոլորը միասին կազմում է ՄԱԿ-ի կանոնաւոր քիչէի արեւի քան 66 տոկոսը:

ՄԱԿ-ի համակարգը նաեւ տարեկան շուրջ 5,4 մլրդ դոլար է ծախսում սոցիալ- տնտեսական զարգացման վը-րայ: Այդ գումարները հայթաթում եւ ծախսում են ՄԱԿ-ի տարբեր հիմնադրամների եւ ծրագրերի կողմից՝ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (UNICEF), ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (UNDP), ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամը (UNFPA), Պարենի համաշխարհային ծրագիրը (WFP) անդամ երկրների կողմից կամաւոր ներդրումների միջոցով:

ՄԱԿ-ի պաշտօնական լեզուներն են՝ անգլերէնը, արաբերէնը, իսպաներէնը, չինարէնը, ռուսերէնը եւ Ֆրանսերէնը: Գործնական լեզուներն են՝ անգլերէնն ու Ֆրանսերէնը:

Պարտիան ստեղծեց ՄԱԿ-ի վեց հիմնական մարմին-ները:

Գլխաւոր ասամբլեան ՄԱԿ-ի կենտրոնական մարմին-ըն է, որտեղ իւրաքանչիւր ազգ կարող է ելոյթ ունենալ եւ լսել ինչի ցանկացած առիթով: Այստեղ ներկայացւած են ՄԱԿ-ի բոլոր անդամները: Հարուստ թէ աղքատ, մեծ թէ փոքր, ամեն ազգ միայն մէկ ձայն ունի: Կարտուղարային հարցերը լուծւում են ձայների երկու երրորդի մեծամաս-նութեամբ:

Գլխաւոր ասամբլեան կանոնաւոր կերպով գումար-ում է տարին մէկ անգամ:

Անվտանգութեան խորհուրդը կոչւած է լինելու աշխարհի խաղաղութեան գլխաւոր պահապանը: Մինչ Գլխաւոր

Հասարակական

ասամբլեան կարող է քննարկել աշխարհի ցանկացած հարց, Անվտանգութեան խորհուրդը զբաղուած է միայն խաղաղութեան եւ անվտանգութեան հարցերով: ՄԱԿ-ի բոլոր անդամները համաձայնել են ընդունել եւ իրագործել Անվտանգութեան խորհրդի որոշումները:

Անվտանգութեան խորհուրդը տասնհինգ անդամ երկիր ունի: Այդ երկրներից հինգը մշտական անդամներ են: Դրանք են՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնութիւնը, Մեծ Բրիտանիայի Միացեալ Թագաւորութիւնը եւ Ամերիկայի Միացեալ Նահանգները: Մնացած տասը ոչ մշտական անդամներ են, որոնք ընտրուում են Գլխաւոր ասամբլեայի կողմից երկու տարի ժամկետով՝ ելնելով աշխարհագրական դիրքից:

Տնտեսական եւ սոցիալական խորհուրդը կարճ ամառուած է ECOSOC: ECOSOC-ի մէջ ընդգրկուած են 54 անդամ երկրներ: Բոլորն էլ ընտրուում են Գլխաւոր ասամբլեայի կողմից երեք տարի ժամկետով: Խորհուրդը սովորաբար գումարում է տարին մէկ նիստ եւ նրա որոշումներն ընդունուում են ձայների մեծամասնութեամբ:

ECOSOC-ը բազմաթիւ օժանդակող յանձնաժողովներ ունի:

ՄԱԿ-ն ունի 14 մասնագիտացուած գործակալութիւն: Դրանցից իւրաքանչիւրը մի առանձին կազմակերպութիւն է՝ իր անդամներով, բիւջէով եւ կենտրոնական գրասենեակով:

ILO- Աշխատանքի միջազգային կազմակերպութիւն.
FAO- ՄԱԿ-ի Պարէնի եւ գիւղատնտեսութեան կազմակերպութիւն.
UNESCO- ՄԱԿ-ի Կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութիւն.
WHO- Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութիւն,
World Bank- Համաշխարհային բանկ.
IMF- Միջազգային արժուոյթի հիմնադրամ.
ICAO- Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպութիւն.
UPU- Համընդհանուր փոստային միութիւն.
ITU- Միջազգային հեռուստահաղորդակցման միութիւն.
WMO- Օդերևութաբանական համաշխարհային կազմակերպութիւն.
IMO- Միջազգային ծովային կազմակերպութիւն.
WIPO- Մտաւոր սեփականութեան համաշխարհային կազմակերպութիւն.
IFAD- Գիւղատնտեսութեան զարգացման միջազգային հիմնադրամ.
UNIDO- ՄԱԿ-ի Արդիւնաբերական զարգացման կազմակերպութիւն: Գոյութիւն ունեն նաեւ երկու մասնաձեւ, բայց առանձին գործակալութիւններ.

- IAEA- Միջազգային ատոմային էներգիայի գործակալութիւն

- WTO- Առեւտրի միջազգային կազմակերպութիւն:

ՄԱԿ-ի ծրագրերն ու միւս հաստատութիւնները ըստեղծել են Գլխաւոր ասամբլեայի կողմից յատուկ տարածաշրջաններում աշխատելու համար:

UNICEF- ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ. UNRWA- Մերձատր արեւելքի եւ Պաղեստինի փախստականների օգնութեան աշխատանքների գործակալութիւն.
UNHCR- ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագոյն յանձնակատարի գրասենեակ.
WFP – Պարէնի համաշխարհային ծրագիր.
UNITAR- ՄԱԿ-ի Ուսուցման եւ հետազոտութիւնների ինստիտուտ.
UNC-TAD- ՄԱԿ-ի Զարգացման եւ առեւտրի համաժողով.
UNDP- ՄԱԿ-ի զարգացման ծրագիր.
UNFPA- ՄԱԿ-ի Բնակչութեան հիմնադրամ.
UNEP ՄԱԿ-ի Շրջակայ միջավայրի ծրագիր.
UNU- ՄԱԿ-ի Համալսարան.
IMSTRAW- Կանանց կատարելա-

գործման միջազգային ուսումնա- հետազոտական ինստիտուտ.
UNCHS- ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի կենտրոն:

Հոգաբարձուների խորհուրդ. ՄԱԿ-ի հիմնադրման ժամանակ աշխարհում կային այնպիսի վայրեր, որտեղ մարդիկ ազատ չէին: Նրանցից մի քանիսի վրայ տարածուում էր Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ ստեղծուած Մանդատը: Միւսները բաժանուել էին քշնամի պետութիւնների՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից յետոյ: ՄԱԿ-ի ստեղծելուց յետոյ այդ տարածքները ընդգրկեցին նրա յատուկ պաշտպանութեան ներքոյ եւ կոչեցին Ենթակայ տարածքներ: Որպէս ՄԱԿ-ի մարմին, ստեղծեց Հոգաբարձուների խորհուրդ, որը վերահսկում էր այդ տարածքներում բնակող մարդկանց սոցիալական առաջընթացը: Սկզբում այդպիսի Տարածքները տասնմէկն էին՝ հիմնականում ԱՖրիկայում եւ խաղաղվկհանուսեան տարածաշրջանում:

Հոգաբարձուների խորհուրդը կազմուած է Անվտանգութեան խորհրդի մշտական անդամներից. այսինքն՝ ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Չինաստան, Ռուսաստանի Դաշնութիւն եւ Ֆրանսիա: Իւրաքանչիւր անդամ մէկ ձայն ունի, եւ որոշումներն ընդունուում են ձայների մեծամասնութեամբ:

Միջազգային դատարանը ՄԱԿ-ի իրաւական դատավրճիներ կայացնող գլխաւոր մարմինն է: Այնտեղ կարող են գործ յարուցել միայն պետութիւնները: Եթէ պետութիւնը համաձայնում է, որ գործը վարի Դատարանը, ուրեմն պէտք է խստամայ ենթարկուել դատավճռի: ՄԱԿ-ի այլ մարմինները իրենց գործունէութեան մէջ նոյնպէս առաջնորդում են Դատարանի խորհրդակցական կարծիքով:

Դատարանը գտնուում է Հաագայում՝ Նիդեռլանդներ, եւ անընդհատ նիստեր է հրաւիրում: Այն ունի 15 դատաւոր, որոնք ընտրուում են Գլխաւոր ասամբլեայի եւ Անվրտանգութեան խորհրդի կողմից: Երկու դատաւոր միեւնոյն երկրից լինել չեն կարող: Որոշում կայացնելու համար անհրաժեշտ է առնուազն ինը դատաւորի համաձայնութիւն:

Քարտուղարութիւնը. ՄԱԿ-ի բոլոր աշխատակիցները Քարտուղարութեան անդամ են: ՄԱԿ-ը գլխաւորում է Գլխաւոր քարտուղարը: Նրան օժանդակում է միջազգային քաղաքացիական ծառայողներից բաղկացած աշխատակազմը, որը կատարում է կազմակերպութեան առօրեայ աշխատանքը: Քարտուղարութիւնը պատասխանատու է ՄԱԿ-ի բոլոր այլ մարմինների աշխատանքի համար եւ ղեկավարում է նրանց առջեւ դրած ծրագրերն ու քաղաքականութիւնը:

Միացեալ Ազգերի Կազմակերպութիւնը ունի սեփա-կան դրօշ: Այն երկնագոյն է, կենտրոնում պատկերուած է սպիտակ խորհրդանիշը: Խորհրդանիշը պատկերում է աշխարհի քարտէզը՝ շրջապատուած ճիթնու ճիւղերով, որոնք խորհրդանշում են խաղաղութիւն: Դրօշի նախագիծն ընդունուել է Գլխաւոր ասամբլեայի կողմից 1947 թ. հոկտեմբերի 20-ին:■

Պաղրասպրտե՝
Սելուրանա Յովհաննիսեանը
«Հայոյ Աշխարհ» օրաթերթ (26.10.2000)

«ՏԻՆՅ՝»³ Կ»ՆՆԱ ՁՇԻ Շ ՆՅ՝ Ս»ՆՇ Ի՛ձՕՍՉԿԻ ԷՇԿԻՅ՝Կ՝

Հայոց ցեղասպանության մասին է խոսում
հրեայ գրող Ալեք Ֆինկիելկրոն

Պատրաստեց Լիլիթ Գրիգորեանը

«Ի՞նչ կատեինք մենք, հոգեբանական ի՞նչ վիճակում կը լինեինք հրեաներս, եթէ մինչեւ այսօր ստիպւած լինեինք ապացուցել գերմանացիներին, որ այն ժամանակ կամենում էին վերացնել մեզ իսպառ, մինչեւ վերջին հրեայ: Մենք հաւանաբար կը խելագարէինք: Այնպէս որ, ինձ թւում է, Հայոց ցեղասպանութիւնը չընդունելով՝ հայերին խելագար են դարձնում: Եւ մնան հանգամանքներում նւազագոյնը, ի՞նչ կարող է անել մի հրեայ հայերի կողքին լինելն է: Նրանք չպիտի մնան միայնակ ժխտողականութեան առաջ», ասել է գրող, փիլիսոփայ, Ֆրանսիայի ժամանակակից մտաւորականութեան նշանաւոր ներկայացուցիչ, ազգութեամբ հրեայ Ալեք Ֆինկիելկրոն «Nouvelles d'Armenie» ամսագրին տւած հարցազրոյցում իր վերջին դրսեղ անդրադարձել է նաեւ Հայոց ցեղասպանութեանը: Նա բազում աշխատութիւնների հեղինակ է՝ նւիրած հրեաների ցեղասպանութեանը: Ներկայացնում ենք հարցազրոյցի թարգմանութիւնը հատուածաբար:

- Ինչպէ՞ս բացատրել Ձեր հետաքրքրութիւնը Հայոց ցեղասպանութեան ընդունման հարցում, որին լծել էք վաղուց՝ յաճախ նոյնիսկ Ձեր դէմ հանելով մտատրականութեան շատ ներկայացուցիչներին:

- Ես հրեակալ մի սերնդի ներկայացուցիչ եմ, որը ժառանգեց տառապանք, ողբերգութիւն՝ ինքը զգացած չլի-նելով այդ տառապանքները:

- Հայոց ցեղասպանութեան հարցը քաղաքական է, նոյնիսկ աշխարհաքաղաքական: Այս առումով մտատրականութեան պայքարը ցեղասպանութեան ընդունման համար խիստ դժարանում է, այնպէս չէ՞:

- Պայքարը քաղաքականացւած է, բայց երբ Հայոց ցեղասպանութեան հանդէպ ժխտողականութիւնը տեղափոխւում է մտաւորականների շրջան, ես առաւել եմ ցնցում: Կարող եմ հասկանալ, որ թուրքերը քաղաքական պատճառներ ունեն այդպէս վարելու: Բայց ի՞նչ պատճառներից դրդուած են համալսարանականները մերժողական դիրք բռնում: Գուցէ դա արւում է պատմական արխիւներ մուտք ունենալու համա՞ր (համալսարանականներին յիշատակելիս խօսքը մասնատրապէս Փարիզի Ֆրանսիական քոլեջի թուրքամետ ժիլ Վենսքէյնի մասին է, որին «Ազգ»-ի ղեկավարը համարներում անդրադարձել է. Լ. Գ.): Այսպէս, Վենսքէյնը մի վերլուծութիւն էր գրել, որտեղ ապացուցում էր, թէ 1915-ին խօսքը ոչ թէ ցեղասպանութեան, այլ պատերազմի մասին է, եւ որ դարավեր-

ջին այդ փաստը վկայակոչելով հայերն իրաւունք չունեն խօսելու մնան տերմիններով, ինչպիսիք ցեղասպանութիւնն է: Կարծում եմ՝ արժէր քննադատել այս մեծ թուրքագէտի մըտքերը, ինչը եւ արել եմ: Ես նաեւ դէմ եմ քլեարկել Ֆրանսիական քոլեջի մնան մի հեղինակատր հաստատութիւն նրան ընդունելուն:



- Դուք Հայոց ցեղասպանութեան ընդունման համար պատասխանատուքին էք ըզգում որպէս հրեայ, որպէս մտատրակա՞ն, համալսարանակա՞ն: Իսկ որպէս Ֆրանսիայի քաղաքացի՞: Բայց եթէ ոչ Մենատի՞ փաստի ընդունման միջոցով, ապա, ըստ Ձեզ, ի՞նչ կերպ Ֆրանսիան պիտի արձագանքի խնդրին:

- Բնականաբար պատասխանատուքին եմ զգում որպէս հրեայ, գենետիկօրէն, թէկուզ նաեւ նրա համար, որ Հիտլերը 1939-ին յայտարարեց, որ որեւէ մէկը չի յիշում Հայոց ցեղասպանութեան մասին:

- Ինչ վերաբերում է Ֆրանսիային, ապա գիտակցութիւնս ասում է, որ խորհրդարանականներին եւ սենատորներին չի պատկանում ցեղասպանութեան փաստն ընդունելու առաքելութիւնը: Ինչո՞ւ սենատորը, որն ընտրել է մի աշխատանքի համար, որն որեւէ առնչութիւն չունի պատմութեան հետ, պիտի դատի՞ հայերի ցեղասպանութիւն իրագործու՞ է, թէ՞ ոչ: Այսպէս շատ սենատորներ են մը-տաձում: Անշուշտ, նրանց մէջ կան այնպիսիք, որոնք յետին նպատակներ ունեն, բայց շատերն իրօք իրենց անկարող են համարում պատմութեան դատական վճիռ կայացնել: Սրա համար նրանց հակահայեր անանելը սխալ է: Մեղըր թուրքերինն է: Այնքան ժամանակ, որքան Թուրքիան իրաժարում է պատմական այդ պատասխանատուքինից, հէնց ինքն է յիշողութեան ու պատմութեան ոլորտից Հայոց ցեղասպանութեան խնդիրը տեղափոխւում քաղաքականութեան դաշտ: Բայց իրերի մնան դրբութիւնից էլ կալելի է օգուտ քաղել: Բանի դեռ հարցը քաղաքականացւած է, Թուրքիան էլ կամենում է մտնել Երուսական միութիւն, մի հնարաւորութիւն կայ, որ պիտի վերջապէս արդարադատութիւն կայացնի: Խօսքս հետեւեալի մասին է. Թուրքիան կամենում է միանալ Եւրասիամայրցիին, ինչու ոչ, բայց մի պայմանով, որ Անկարան ընդունի Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը: Սա պիտի լինի այդ պետութեան հետ որեւէ բանակցութիւն վարելու նախապայմանը: Կարծում եմ՝ հայերն այս ճնշումը պիտի գործի դնեն Երուսականի վրայ երուսական պառլամենտների միջոցով:

«Լսո՞ւմ էք աշխարհի աղմուկը, իսկ բացակաների լռութի՞ւնը: Ձղածգութիւն կայ այսօրայ մէջ եւ աղօթք, որ մեզ են ուղղում մեռեալները: Մեռեալները խնդրում են, պէտք է պատասխանել նրանց: Դա յիշողութեան, պատմական արդարութեան առջեւ մեր պարտքն է»:■

Ռուսական զորքերը լքում են Ջալալաբադը, նրանց հետ՝ ջալալաբադահայուքիները

Թ. Յակոբեան

Եւրոպայի խորհուրդն այս կողմերում վերաբնակեցնում է սոււննի մահմեդականների

Յուլիսին ռուսական «Ազենստո վոյեննիխ նովոստեյ» գործակալութիւնը, վկայակոչելով Ռուսականի գլխատը շտաբի անանուն աղբիւրներ, հաղորդագրութիւն տարածեց, թէ Վրաստանում տեղաբաշխած ռուսական ռազմակայանները դուրս կը բերեն եւ կը տեղափոխուեն հարեւան հանրապետութիւն՝ Հայաստան: Չէր նշում ռուսական ռ՞ր ռազմակայանի մասին է խօսքը՝ Վազիանիի, Գուդա-ուտայի, Բաթումի, թէ՞ Ախալքալաքի: Այն ժամանակ «Ազգը» փոքրիկ յօդած հրատարակեց. նախ Հայաստան-ի արտգործնախարարութիւնից փորձեցինք ճշտել՝ ինչքանով է լուրը համապատասխանում իրականութեանը: Պատասխանեցին՝ ճիշտ հասցեով չէր դիմել: Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնից ասացին՝ տեղեկութիւններ չունենք:

Հոկտեմբերի 6-ին «Ազատութիւն» ռադիօկայանի վրացական ծառայութիւնը, կրկին վկայակոչելով ռուսական աղբիւրներ, հաղորդեց, թէ սեպտեմբերի 26-ին Մուկրայում տեղի ունեցած Վլադիմիր Պուտին-Ռոբերտ Բոչարեան հանդիպման ժամանակ կողմերը համաձայնել են Ախալքալաքում տեղաբաշխած ռուսական 62-րդ դիւիզիան տեղակայել Հայաստանում: Անցած ուրբաթ ԻՏԱՆ-ՏԱՍՍ-ը հաղորդեց, որ Ախալքալաքում տեղակայած ռուսական ռազմակայանի զինտեխնիկայով բեռնըւած առաջին բեռնատարները հոկտեմբերի վերջերին կը հասնեն Գիւմրի: Կրկնում ենք՝ առաջին բեռնատարները: Ուրբաթ երեկոյեան «Ազատութիւն» ռադիօկայանի հայկական ծառայութիւնը նշեց, թէ 62-րդ դիւիզիայի Հայաստանի տարածք տեղափոխելու հարցը վճռել է դեռ 1999 թ. նոյեմբերին՝ ԵԱՀԿ Մտամբուլի գագաթաժողովի շրջանակներում: Ի դէպ, ստամբուլեան գագաթաժողովի շրջանակներում ձեռք բերած համաձայնութեանը, Վազիանիի (Թրիլիսից ոչ հեռու) եւ Գուդաուտայի (Աբխազիա) ռուսական ռազմակայանները պէտք է դուրս բերեն մինչեւ 2001թ. յուլիսի 1-ը, իսկ Բաթումիը (Աջարիա) եւ Ախալքալաքիը (Ջալալաբ) մինչեւ 2003 թ. դեկտեմբերի 31-ը:

Ախալքալաքից 62-րդ դիւիզիայի դուրսբերման հարցը Ռուսաստանի եւ Վրաստանի ռազմական համաձայնութեան շրջանակներում է, Հայաստանը որեւէ ձեռով, որպէս Վրաստանի ներքին խնդիր, չի կարող միջամտել: Մակայն այլ բան է Հայաստան, պաշտօնական Երեւան, բոլորովին այլ բան հայութիւն, հայութեան անվտանգութեան երաշխիքներ: Ախալքալաքից ռուսական զորքերի դուրսբերումը կը ստիպի՝

Չայերին «փուլ առ փուլ» հեռանալ Ջալալաբից՝ Նրանց մի մասն արդէն հեռացել է: Չկայ աշխատանք, փող, լոյս, յոյս ու էլի ինչ-որ բան... չկայ, չկայ, չկայ... Ջալալաբում հայերը կազմում են ամբողջ բնակչութեան

95 տոկոսը՝ շուրջ 110-120 հազար: Աւելի ճիշտ, փաստաթղթերում այդքան է նշում: Ինչպէս ամբողջ Վրաստանում, այնպէս էլ Ջալալաբում 90-ական թթ-ից լոյս չկայ: Հայերը չեն ուզում խաւարի մէջ ապրել: Աշխատանք էլ չկայ: Հայերն անգործ մնալ չեն կարող: Եթէ նրանք բարձրաձայն բողոքում են իրենց թշուառ կեանքից, անմիջապէս հետեւում է վրացիների պատասխանը՝ հայերն անջատողականներ են: Հիմա Ջալալաբի հայ շատ օջախներում երեկոները լամպ կամ մոմ չի վառում: Գուրը փակել, հեռացել են: 1993 թ. հայութեան քանակն այստեղ կրկնակի կրճատեց՝ այս անգամ վարչատարածքային նոր բաժանման պատճառով: 95 տոկոս հայութիւնն Ախալքալաքի, Բոզդանովկայի եւ Ասալինձայի շրջաններում էր: Նոր գծած քարտեզի վրայ հիմա գրած է Մամջիւ: Ջալալաբիայի երկրամաս, որի մէջ մտնում են նախկինում Ախալքալաքի, Բոզդանովկայի (Նինոծմինդա), Ասալինձայի, Ախալքալաքի, Բոթումի եւ Ադիգենսկի շրջանները: Վրացիները հպարտութեամբ նշում են, որ Մամջիւ-Ջալալաբիան ինտերնացիոնալ շրջան է, որտեղ ապրում են. 50 տակոսը՝ վրացիներ, 40 տակոսը՝ հայեր, մնացեալ 10 տակոսը՝ աղբրեջանցիներ, յոյներ, հրդեհներ, ռուս դուխտորներ, մեսիտեթի թուրքեր, այլ ազգութիւններ:

Վարչատարածքային նոր բաժանման պատճառով ջալալաբահայերը չեն հեռանալ, բայց 62-րդ դիւիզիայի դուրսբերման պատճառով, տեղափոխուեն Հայաստան թէ՛ Հնդկաստան, կհեռանան: Շուրջ 1000 ընտանիք եւս կը մնայ անգործ: 62-րդ դիւիզիայում են աշխատում շատ հայեր:

Ջալալաբահայերին անհանգստացնում է մէկ այլ բան: 1944 թ. նոյեմբերին Մտալինը 120 հազար մեսիտեթի թուրքերի արտաքսեց Կենտրոնական Ասիա՝ Ֆերգանայի հովիտ: Անցեալ տարի, երբ Վրաստանին ընդունում էին Եւրոպայի խորհուրդ (ԵԽ), առաջ քաշեց կարեւոր նախապայման. առաջիկայ 12 տարիներին այն մեսիտեթի թուրքերի համար, ովքեր ցանկանում են վերադառնալ մշտական բնակավայրեր՝ Մամջիւ Ջալալաբիա, Թրիլիսին պարտաւորում է խոչընդոտներ չստեղծել: Կարեւոր չէ, մեսիտեթի թուրքերը ուզո՞ւմ են վերադառնալ, թէ՞ ոչ: Կարեւորն այն է, որ ԵԽ-ն է ուզում, վերաբնակիչներին որպէս նպաստ տրամադրել մի քանի հազար դոլար:

Ովքե՞ր են մեսիտեթի թուրքերը, ինչպէ՞ս նրանց կրնո՞ւնեն «տանտէրերը», ի՞նչ ապագայ է սպասում Մամջիւ-Ջալալաբիային, վիրահայութեանը: Չեմ փորձի այս հարցերի պատասխանը տալ ոչ այն պատճառով, որ ինչ-ինչ տագնապներ են առաջացնում: Պատասխանը թող իմ վրացի գործընկերը տայ: Յատկապէս անցեալ տարի վրացական մամուլը հեղեղած էր մեսիտեթի թուրքերի մասին պատմող յօդածներով: Ահա դրանցից մէկը:

«Էրբաքանը փորձում էր ապացուցել, թէ «Մամջիւ-Ջալալաբեան Թուրքիայի պատմական հողն է» («Շանսի» շաբաթաթերթ)

Նախագահ Օւսաբոնաձէի յետագայ պաշտօնավարութիւնը կարող է յանգեցնել նրան, որ գալիք դարում Վր-

Հասարակական

րաստանը մնայ առանց վրացիների: Արխագիայում վրացի չես գտնի, գրեթե նոյն պատկերն է Յփսիմայի տարածաշրջանում (Հարարային Օսիա-Թ. Հ):

Շեարդնաձեռն համաձայնեց Վրաստանում վերաբնակեցնել Ֆերգանայի թուրք-մեսխեթցիների մի քանի տասնեակ հազարանոց յորդային: Մեր դեկավարներին չի անհանգստացնում Մամջիտ-Ջալալեթիայում թուրքերին վերաբնակեցնելու վտանգը: Ջալալեթիի բնակչության մեծ մասը հայեր են, եւ բոլորիս է յայտնի հայ-թուրքական թշնամութիւնը: Ինչո՞ւ ենք արհեստականօրէն թէժ կէտեր բորբոքում մասնատուած, քայքայած Վրաստանում: Ենթադրենք, Ֆերգանայի թուրքերը ծագումնաբանօրէն վրացիներ են (պատմաբանների մի մասը պնդում է, թէ նրանք թուրքեր են, մի մասը՝ քրդեր, երրորդները՝ աղբրեջանցիներ, չորրորդ խումբը՝ մահմեդական վրացիներ, մի քան հաստատ է՝ մեսխեթցի թուրքերը սուննի մահմեդականներ են, որոնց մի հատուած ընդունել է վահաբականութիւն-Թ.Հ): Մակայն ինչո՞ւ անպայման բնակեցն Ջալալեթիայում: Հաշի առնու՞մ է տեղի հայութեան կարծիքը: Ջալալեթցի վրաց բնակչութիւնը եւս դէմ է թուրք մեսխեթցիների վերադարձին:

Պատմական «արդարութիւնը» վերականգնելու քոլի տակ թուրքիան նենգ նպատակներ է հետապնդում: Նոյն ձեռքով թուրքիան ցանկանում է Ղրիմում վերաբնակեցնել արինակից թաթարներին: Բուլղարիայի՝ թուրքիային սահմանակից տարածքներում բնակում են մի քանի հարիւր հազար թուրքեր: 1991 թ. Բուլղարացի թուրքերը փորձեցին հանրաքուէի միջոցով միանալ թուրքիային: Նոյնը չի՞ փորձի թուրքիան Վրաստանի պարագայում, եթէ թուրք-վրացական սահմանում մի քանի տասնեակ հազար մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումը իրականութիւն դառնայ: Թուրքիան իր արինակիցների շահերը պաշտպանելու պատրուակով չի՞ միջամտի Վրաստանի ներքին գործերին: Ժամանակին վարչապետ Էրբասանը փորձում էր ապացուցել, թէ Մամջիտ-Ջալալեթիան թուրքիայի պատմական հողն է:

Պանթուրքական ծրագրերից է Կարս-Ախալքալաք երկաթուղու շինարարութիւնը, որի իրականացման դէպքում թուրքիան Ջալալեթիայով, այնույեւ ներքին Քարթլով (Մամնելու, Ռուսթաւ, Գարդարան, Ծիթելի-Ծկարօ. այստեղ գերագանցապէս աղբրեջանցիներ են ապրում Թ.Հ) կը կապի Աղբրեջանին: Մի՞թէ գործող հաղորդակցութեան միջոցները չեն բարարում: Բաթումով եւ Վալէով անցնող երկաթգծերն աշխարհագրական առումով արեւի մօտ են թուրքիային: Վրաստան- թուրքիա ցամաքային կապը իրականացում է հէնց Բաթումով եւ Վալէով: Ո՞րն է Ախալքալաք-Կարս երկաթգծի կառուցման իմաստը:

Այսօր Ջալալեթիի հայութիւնը Հայաստանին միանալու ձգտում չունի, մինչդեռ մեսխեթցի թուրքերի վերաբնակեցումից յետոյ՝ հաշի առնելու անվտանգութիւնը, նա կը ձգտի միանալ Հայաստանին: Եթէ ԵԽ-ն մեզանից պահանջում է 55 տարի առաջ բռնագաղթած թուրք մեսխեթցիներին ետ վերադարձնել, ապա թող ստիպի Աղբրեջանին, Ռուսաստանին, Հայաստանին եւ թուրքիային՝ շուրջ 80 տարի առաջ՝ խորհրդային կարգերի հաստատման ժամանակաշրջանում այս երկրներին նւիրած վրաց հինաւորց հողերը ետ վերադարձնել:

Շար. էջ 5-ից

Հատկեցնենք. տօնը կոչում է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-ամեակ: Տօնակատարութիւնների հիմնական մասը տեղի է ունենալու Հայաստանում: Այս տարի Իրանում կը լինեն միջոցառումներ, ինչպէս Սուրբ Թադէոսի վանք ուխտագնացութիւնը: Արդէն խօսել ենք Խոսրով Յարութիւնեանի հետ, որ Ս. Թադէոսի վանք ուխտագնացների մէջ Հայաստանն էլ ներկայացած լինի: Կարծում են, Չեր նշած խնդիրը չի կարող խոչընդոտ լինել, որովհետեւ հաւատի համար որեւէ մէկի ուխտագնացութիւնը չի կարող որեւէ մէկի դժգոհութիւն առաջացնել: Գնոռանաք, առաջիկայում նախատեսում է ՀՀ նախագահի եւ Ամենայն հայոց կաթողիկոսի ուխտագնացութիւնը Տեր Զօր: Այսինքն, դրանք համահայկական ձեռնարկներ են եւ պիտի աշխարհի առաջ պատշաճ ներկայանանք, եւ 1700 տարւայ հաւատը բերի միասնութեան, հաւատի՝ ապագայի նկատմամբ:

Վերջին շրջանում ակտիւ շփումներ են կատարում Իրանի Արեւելեան Ատրպատականի եւ Հայաստանի Միւնիքի մարզերի միջեւ՝ գործարար կապերի զարգացման, երկկողմ փոխշահաւետ պայմանագրերի կնքման նպատակով: Ինչպիսի՞ ազդակ կարող են հաղորդել այս շփումները Իրան-Հայաստան տնտեսական կապերին:

- Դեսպանատունը շատ ջանք գործադրեց, որպէսզի հաստատուի Միւնիք-Արեւելեան Ատրպատական կապը, մտածում ենք Արարատի մարզ-Արեւմտեան Ատրպատական կապերի ստեղծման մասին:

ՀՀ կառավարութիւնում ստեղծուած Իրան-Հայաստան յանձնաժողովը, որը գլխավորում է ՀՀ էներգետիկայի նախարար Կարէն Գալուստեանը, յատուկ խնդիրներ է դրել: Մի քանի տարւայ դադարից յետոյ կրկին գործում է սահմանային շուկան: Պէտք է հասնենք նրան, որ ՀՀ-ԻԻՀ յարաբերութիւններում տնտեսական ակտիւութիւնը նկատելի լինի: Եթէ 98-ին առեւտրատնտեսական փոխյարաբերութիւնները կազմել են 45 մլն դոլար, 99-ին այդ թիւը հասել է 100 մլն-ի: 2000 թ. առաջին ինն ամիսներին 80 մլն է կազմել: Ըհիշտ է, դա շատ փոքր թիւ է, բայց առաջընթացը նկատելի է:

Ի՞նչ կատար ներդրումների մասին:

Իրավիճակը փոխվել է: Իրանում այժմ շատ են հետաքրքրում Հայաստանի մի շարք ձեռնարկութիւններում ներդրումներ անելով: Մենք էլ շահագրգռուած ենք, որ հայկական ապրանքատեսակները Իրան ներմուծեն: Այո՛, նախկինում իսկապէս Իրան-Հայաստան առեւտրային յարաբերութիւնները եղել են «տուրակային» մակարդակի: Հիմա յուսով են, մօտ ժամանակներում ներդրումներ կլինեն:

Թ. ՅԱԿՈԲԵԱՆ

Շար. էջ 11

Հասարակական

ՃՅ ԽՍ, 3 Ի, ԱՇՊ
3 ԵՄՅ ԻՕձՕՁ» 3 Մ, 3 Ի



Հիսսիսային եւ Հարաւային Ամերիկաներից օրերս Հայաստան ժամանած ՀՅԴ Բիւրոյի անդամների ներկայութիւնն առիթ հանդիսացաւ, որ Դաշնակցութիւնը «սեփականաշնորհի» Մ. Նահանգների Կոնգրեսում Հայոց Յեղասպանութեան բանաձեւի ընդունման առայժմ հայանպաստ ողջ գործընթացը: Հեռուստատեսութիւն, ռադիօ եւ տպագիր մամուլ այս օրերին ողողւած են ՀՅԴ գործիչների ինքնագոհ եւ ինքնագովերգող արտայայտութիւններով:

Ոչ որ չի պատրաստուում նսեմացնել Հայ Դատի հետապնդման գործում ՀՅԴ-ի եւ տարբեր կառոյցների՝ մասնաւորաբար Հայ յանձնախմբերի դերը: Յատկապէս արդիւնաւետ է գործում ՀՅԴ Հայ Դատի Վաշինգտոնի գրասենեակը, որը բացի լռիչինգից, ինչն անում են նաեւ ամերիկահայ մեր միւս կազմակերպութիւնները, շահագրգիռ շրջանակներին եւ անհատներին օրօրին իրազեկ է պահում կատարուող աշխատանքներին, բողոքի կամ քա-

ջալերանքի ակցիաներ է կազմակերպում ամերիկահայ շրջաններում: Եւ ամենակարեւորը՝ չի յոխորտում, չի շեփորում սեփական աշխատանքները: Ի տարբերութիւն ՀՅԴ Բիւրոյի հայաստանեան թէ սփիւքահայ որոշ անդամները, ըստ երեւոյթին ՀՅԴ Վաշինգտոնի գրասենեակում հասկանում են, որ Հայ Դատի, ի մասնաւորի Հայկական բանաձեւի ընդունման գործը հաւաքական աշխատանք է պահանջում: Ապագայը՝ յիշեալ գրասենեակից կամ ՀՅԴ Կալիֆորնիայի օրգան «Ասպարդզի» խմբագրութիւնից վերջին օրերին ստացւած անգլերէն հաղորդագրութիւնների ներքոյ գրուում է, որ «Հայոց Յեղասպանութեան բանաձեւը ակտիւ կերպով օժանդակւում է ամերիկահայ տարբեր կազմակերպութիւնների համախըմբման (ընդգծումն իմն Է-Հ. Ա.) կողմից», եւ այբբենական կարգով յիշում են այդ կազմակերպութիւնների անունները՝ Հայ կաթողիկոսների Էկզարքութիւն, Ամերիկայի հայկական համագումար, Հայ իրաւաբանների ընկերակցութիւն, Հայ արեւարանչական համաշխարհային խորհուրդ, Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն, Ամերիկայի հայկական միսիոներական ընկերակցութիւն, Հայ ազգային խորհուրդ (ՌԱԿ), Ամերիկայի հայկական ազգային կոմիտէ (ՀՅԴ), Հիւսիսային Ամերիկայի հայկական նպաստամատոյց ընկերութիւն, Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան թեմեր, Հայ եկեղեցու Ամերիկայի Արեւելեան եւ Արեւմտեան Կիլիկեան թեմեր, Վարդանանց ասպետներ:

Տպաւորիչ է, չէ՞, մեր հաւաքական կամքը Մ. Նահանգների տարածքում արտայայտող այս ցուցակը, նոյնիսկ՝ խանդավառող: Սակայն, աւա՛ղ, ըստ երեւոյթին այն ամենեւին չի խանդավառում Բիւրոյի որոշ գործիչների:

Վերջինները, ըստ իս, թոյլ են տալիս նաեւ մէկ այլ սխալ՝ ցեղասպանութեան բանաձեւի ընդունման ողջ գոր-

ծը «դաշնակցութեան ճամփով» վերագրել հայկական ջանքերին: Ո՛ր էր, թէ դա ճիշտ լինէր: Ներկոնգրեսական եւ ներամերիկեան ներկայ խաղի կանոնների տէրը մենք չենք, դժբախտաբար: Անշուշտ, անուրանալի է հայկական լռփփինգի դերը, սակայն իրավիճակի տէրը մենք չենք, ամենեւին: Եւ դա, վստահ եմ , առաւել տեսանելի կը լինի յետագայ օրերին:

ՀՅԴ Բիւրոյի ներկայացուցիչները թոյլ են տալիս եւս մէկ, շատ արեւի ծանրակշիռ սխալ, երբ պնդում են, որ իրենք, կամ գլխաւորաբար իրենք են տանում Հայ Դատի, այս դէպքում՝ թիւ 398 բանաձեւի հետապնդման աշխատանքները: Դրանով նրանք, փաստօրէն, կրկնում են, պաշտօնական թէ անպաշտօնական Թուրքիայի պնդումները, թէ հայկական պահանջատիրութիւնը ոչ թէ բոլոր հայերի, այլ ընդամենը դաշնակների ձգտումն է, թէ եթէ Ռոբերտ Քոչարեանը ՄԱԿ-ի ամբիոնից Հայոց Յեղասպանութեան հարց է բարձրացնում, ապա... դաշնակ է, եւ որ Դաշնակցութիւնն է միայն դէմ հայ-թուրք յարաբերութիւնների բնականոնացմանը (անշուշտ, այս վերջին բառի տակ հասկանալով միայն իրենց՝ թուրքերի մտքում եղածը):


Ուրեմն, հետտրական մի հարց՝ ճի՞շտ են թուրքերի այս եւ նման պնդումները:■

Շ. Ա. «Ազգ» օրաթերթ
17. 10. 00

Շար. էջ 10-ից

Ռուսաստանը Վրաստանի հետ այցագրային կարգ է մտցնելու Այս մասին հոկտեմբերի 12-ին Թբիլիսիում յայտարարեց Վրաստանում Ռ-Դ նորանշանակ դեսպան Վ. Գուրգելը: Չուշացաւ պաշտօնական Թբիլիսիի պատասխանը. այդ դէպքում դժարութիւններ կառաջանան Վրաստանում բնակւող ռուս բնակչութեան համար, ովքեր կցանկանան մէկնել Ռուսաստան: Իսկ հայն՞որը: Չուսախքում բնակւող հայերի մի մասը չի փոխել նախկին ԽՍՀՄ անձնագրերը: Վրաստանը թոյլ կտա՞յ իր երկրի քաղաքացիներ հայերին առանց այցագրի մէկնել Ռուսաստան: Իսկ Ռուսական կողմնորոշում ունեցող Աջարիան եւ Թբիլիսիին չենթարկւող Ապաւն Արաշիձէն ինչպէ՞ս կը ընդունեն Վրաստանի կենտրոնական իշխանութիւնների վճիռը: Աղօս է նաեւ դէ Ֆակոս Վրաստանից անկախ Արխագիայի պարագան: Ուշագրաւ է, որ Հարաւային Օսիայի բնակչութեան մեծ մասն արդէն ընդունել է Ռու-սաստանի քաղաքցիութիւն: Հարաւային Օսիայի ղեկավարութիւնը բազմիցս դիմել է Ռ-Դ ԱԳՆ՝ Ցիսնալիում ռուսական հիւպատոսութիւն բացելու խնդրանքով: Սա էլ հարցի լուծում չէ:

Ի՞նչ է սպասում Վրաստանին: Հարցին պատասխան կը տայ ժամանակը: ■



Մշակոյթ

... Եթէ մեր գաղութի գիտակից մարդկանց մենութեան մէջ կայացած վճիռները փորձում են բեկանել բռնութեամբ...

«Աստծոյ տասներկու օրը» բեմադրութեան առիթով

Սերոժ Թիւկմեան

Եւ այս աստուած-արքան՝ Տիգրան Մեծը, տասներկու օրում կերտեց իր նկարագիրը, լուծեան մէջ լսելով իր սեփական ձայնը. նրա կերտած նկարագիրը ունէր այնպիսի յատկութիւն, որ իրեն ենթակայ ժողովուրդը ապրելով իր պատկերով եւ իր նմանութեամբ, կարողացաւ դիմանալ ժամանակի եւ տարածութեան բոլոր մարտահրաւրներին:

Տիգրան Մեծ արքային հռոմէական կայսրութիւնը մարտահրաւր էր նետել՝ յանձնել կնոջ եղբօրը, Պոնտոսի գահագուրկ արքայ Միհրդատ Եւպատորին. Միհրդատը ապաստան էր գտել արքայի արքունիքում:

Թագաւորին տրուել էր տասներկու օր ժամանակ՝ դաւաճանել մի մարդու կամ դաւաճանել հայրենիքին. նրա որոշումը ճշտելու էր ժամանակաւորի եւ մնայունի, անհատականի եւ հանրայինի փոխյարաբերութիւնը:

Շրջապատը՝ թելադրած հարցի կապակցութեամբ, նկատի ունենալով անհատական եւ հասարակական կարգավիճակը, բռնել էր երկու հակադիր դիրք: Հայոց թագուհին եւ քրմայետը պնդում են, որ Միհրդատին պէտք է յանձնել Հռոմի կայսրութեանը. իսկ ծաղրածուն եւ հարճը խորհուրդ են տալիս հեռու կանգնել այդ քայլից:

Թագուհին իբրեւ մայր, իր որդիների անուցից, որպէսզի չկործանուի այն ինչ որ որդիներին է պատկանում, աղաչում է. «Յանձնիր Միհրդատին: Հռոմէացի գորավարին տուր»: Թագուհին այս կարծիքին է հասել այն օրանից, երբ երեք արու գտաւ է ծնել թագաւորի համար, երեք արծիւ. թագուհին այդ օրը յիշելով է պահանջում եղբօրը յանձնել թշնամուն:

Քրմայետը մի այլ դիրքից, կրկնում է թագուհու պահանջը: Քրմայետը աշխատում է արքայի ստեղծած ուժի կողքին, այդ ուժը իմնատրոդ մի գաղափար դնել, եւ այդ գաղափարի անուն տակ իր կամքը թելադրել. «Դու, դիմում է նա թագաւորին, ռամիկի պէս ես դատում: Դաշնակից, կնոջս եղբայրը... Իմ մասին ի՞նչ կասես... Արքաների տրամաբանութիւնը այլ պէտք է լինի»: Տուր Միհրդատին, աղերսագին խնդրում է նա:

Թագուհին եւ քրմայետը տարբեր անկիւններից են մօտենում հարցին, բայց երկուսն էլ խօսում են նոյն դիրքից՝ իշխանատրի:

Իսկ այլ մետաղից են ձուլւած հարճը եւ ծաղրածուն, որով եւ պայմանատրում է նրանց դիրքորոշումը: Հարճի պարզ ու յստակ դիրքորոշման պէս, պարզ ու յստակ է նրա խօսակցական լեզուն:

Հարճ-(Կէս ճամփից, յանկարծ) Միհրդատին շյանձնես տէր իմ:

Արքայ-Չյանձնե՛մ: Ինչո՞ւ:

Հարճ- Ամօք է, տէր իմ:

Արքայ- (Յնցած) Ամօ՞ք: Հէնց այդքա՞ն:

Հարճ- Այո, տէր իմ, ամօք է:

Ծաղրածուն էլ համեստ խափից է, սակայն ուշիմութեան բարձր մակարդակը նրան օժտել է սրախօսութեամբ, որի հարածներից չի կարողանում խուսափել քրմայետը, իսկ արքայի նկատմամբ լեցած է նիհարութեամբ: Նա չի ցանկանում, որ իր արքայից-արքան իր դաշնակցին յանձնի

թշնամուն: Նա չի ցանկանում, որ արքան խաղաղութիւն մուրայ դաւաճանութեամբ: Իր ստեղծած ուժը պահպանի վախկոտութեամբ: Ծաղրածուի համար թագաւորի այսպիսի մօտեցումը, իր պարտականութեան համաձայն միայն մի իմաստ ունի՝ ծիծաղելի:

Երկու հակադիր ճակատի բաժանած արքունիքը, աշխատում է իր կամքը թելադրել արքային: Իրարքանչիւր ճակատ իր դիրքից եւ շահերից ելնելով փրկութեան ուղի է առաջարկում:

Թատերգութեան ընթացքը մերթ քնական եւ մերթ թելադրանքով մի ելք է մատնանշում լսել ներքին ձայնին, քանզի տեսական, ազդեցիկ, ներգործող որոշումները կայանում են իրարքանչիւր անհատի ներաշխարհում, ապա դառնում մի ժողովուրդի կամ հասարակութեան սեփականութիւնը: «Ես մենակ մնացի,- ասում է արքան,- էլ ոչ ոք չի ասի՝ մի յանձնիր Միհրդատին... Էլ ոչ ոք չի ասի՝ յանձնիր նրան... Եւ հիմա, այս համատարած լուծեան մէջ, ես վերջապէս իմ սեփական ձայնը կը լսեմ...»:

Ու արքան, պատիւ իրեն լսում է սեփական այն ձայնը, որ մեր ժողովուրդին թոյլատրեց, ունկնդիր այդ կանչին, ապրել հազարամեակների ընթացքում՝ առաջնորդելով բարոյականութեամբ:

«Կամ ուժ, կամ բարոյականութիւն, արքայից արքայ: Երբորդ ճանապարհ չկայ: Որտեղ յաղթում է ուժը, տուժում է բարոյականութիւնը: Իսկ որտեղ բարոյականութիւնն է յաղթում, տուժում է ուժը: Դու բարոյականութիւնն ընտրեցիր»:

Արքաներ կան, որ դոմապան էլ չեն, դոմապաններ կան, որ արքայ են:

Ժամանակակից թեմաներով պիեսներ կան, որ պատմական են: Պատմական պիեսներ կան, որ ժամանակակից են: Վերի սահմանների համար մասամբ օրինակ կարող է ծառայել «Աստծոյ տասներկու օրը» որբերգութիւնը:

Պատմական թեմաներով գրած ստեղծագործութիւնները ունեն մի թոյլ կողմ: Կարելի է ժամանակակից գաղափարների կրող դարձնել, հազարամեակներ առաջ ապրող հերոսներին: Նրանք կարող են հեղինակի թելադրանքով լուծեան մէջ բարոյականութիւնը ընտրել: Մակայն այս նպատակին հասնելու համար պարտադրած են ընտրել այնպիսի մի միջոց, որ մերժելի է ժամանակակից գաղափարների լոյսի ներքոյ: Հմարտո՞ր է բարոյականութեան յաղթանակ՝ ոչ բարոյական միջոցներով: Քրիստոնէական աշխարհայեացքը հեթանոսական ուժով կարելի՞ է հաստատել:

Այս ըմբռնումով ի՞նչ կարող է տալ պիեսի բեմադրութիւնը թեհրանահայ համայնքին: Կամ ո՞ր թելադրանքի բերումով է բեմադրիչ Կիտուշ Արզուեանը ձեռնարկել թատերգութեան ներկայացումը: Պատահակա՞ն է ընտրութիւնը թէ նպատականադրած:

Հայութեան համեմատութեամբ պարսկահայ ու թեհրանահայ համայնքը փոքր ածու է, բայց փոքր ածուն էլ կարիք ունի գիտակից, ինքնավստահ, համատարած լուծեան մէջ իր սեփական ձայնը լսող դոմապանների, որ արքայ դառնալու արժանիքը ունեն:

Իսկ եթէ մեր գաղութի գիտակից մարդկանց մենութեան մէջ կայացած վճիռները փորձում են բեկանել բռնութեամբ, ապա հակադրելով թատերգութեան, պէտք է պնդել, որ համայնքը կարիքը չունի արքաների, որ դոմապան դառնալու արժանիքը չունեն: ■

«Օ»ն «ն»ն՞՞՞ 3 é3 ëâ »ÉY»ն՞՞՞

Կրկին Ազնաւուրը

«Ես իմ կեանքում շատ քիչ բան եմ ձեռքից բաց թողել, քանի որ ոչ միայն զգոյշ եմ եղել, այլեւ՝ գիտակից», 75 տարիների իմաստութեամբ ասում է Շառլ Ազնաւուրը, որը ղեկավարելու 16-ին Փարիզի Կոնգրեսների պալատում կը սկսի իր, ինչպէս ինքն է ասում, վերջին համերգաշրջանը: «Ազնաւուր- 2000»-ը (սա նրա նոր կոնպակտ դիսկի վերնագիրն է) տօնական տեսք ունի, եւ դժար է պատկերացնել, որ այսքան առոյգ եւ ամենուր ներկայ մի անձնաւորութիւն կը հեռանայ ասպարէզից: Իսկ որ նա ամենուր ներկայ է, ապացուցում է նոր արարուած «Լոտրել» երաժշտական կոմեդիայի նկարահանումը Մեծ Բրիտանիայում, պատրաստուած է Կանադայում անգլերէն Ֆիլմ նկարահանել Ատոմ Էդոյեանի ղեկավարութեամբ:

«Ես չեմ կարող բոլորին դուր գալ»,- համեստօրէն ասում է Շառլ Ազնաւուրը: Բայց անկախ նրանից՝ բոլորն են նրան սիրում, թէ՛ ոչ, Ազնաւուրը ժամանակներ չճանաչող իւրատեսակ մի հիմնադիր է, որը կարողացաւ ի մի հաւաքել Տրենէի երկրպագուներին եւ Ջոննիի Ֆանատներին: Նա առատաձեռն է, եւ բնութիւնն էլ նրա նկատմամբ առատաձեռն է եղել: Լաւատես է, չնայած նրա երգերի մեթաֆորային խօսքերը լսողին կարող են հակառակը թուալ: Ի վերջոյ, սովորական մարդ է, ինչպէս սանդղահարթակի ձեր հարեւանը:

- Ձեր վերջին այբումն երգում էք. «Ձագը վերադարձել է»: Արդեօ՞ք դա նշանակում է, որ Դուք կրկնում էք հինը, չէ՞ որ ջազային ռիթմերով էլ սկսել էք:

- Հնարատր է, որ այդպիսի տպաւորութիւն ստեղծի, բայց հինը կրկնելը կը նշանակի՝ վերջ: Դրան ես այնքան էլ չեմ ձգտում...

- Ձեր նախորդ այբումը՝ «Ձագնաւուր»-ը, նոյն թեմաների շուրջ էր...

- Այո, բայց գաղափարն իմը չէր, ես պարզապէս հաճոյքով ընդունեցի նման այբով ստեղծելու գաղափարը, քանի որ գիտէի, որ պիտի աշխատեմ շատ լաւ երաժիշտների հետ՝ Էդի Լուսի, Ջեքի Տարասոն, Դիանա Ռիլ եւ ուրիշներ: Փաստօրէն, ես նման էի մի դերասանի, որին լաւ ռեժիսորը հէնց նկարահանման հրապարակում վստահում է սցենարը:

- 60-ականներին Դուք որոշիչ դեր խաղացիք, երբ Ֆրանսիական երաժշտութիւնից անցում էր կատարում դէպի «ye-ye»-ժանրը (այդպէս են անուանել 60-ականների ըսկզբին Միացեալ Նահանգներից եկած երժշտական ոճը):

- Ես երբէք չեմ պնդել, թէ «ye-ye»-ն լաւն է: Ես պարզապէս ասել եմ, որ պէտք է սպասել, որ շարժումը տեղ գտնի եւ հսկել զարգացումը: Երբ տեսնում ենք, թէ ինչպիսի արտիստների է առնչել «ye-ye»-ն, չենք կարող ասել, թէ ի-



գոր է եղել: Երբ ռեպը ի յայտ եկաւ, ինձ ասացին. «Օ, լա-լա, սա երաժշտութիւն չէ, սա երկար չի տեւի»: Այո, դա երաժշտութիւն չէ, դա նոր շարժում է, յայտնագործութիւն: Դատաւարտելուց առաջ պէտք է սպասել, տեսնել, թէ ինչ դուրս կը գայ դրանից: Ես միշտ խուսափել եմ մարդկանց կամ երեւոյթները առաջին տպաւորութեամբ դատել: Դիշտ այդպէս էլ խուսափել եմ խորհուրդներ տալ: Երբեմն պարզապէս իմ ցանկութիւնն եմ արտայայտում: Երբ արեստագէտը խորհուրդ է տալիս, մտածում է. «Եթէ ես լինէի, այսպէս կանէի», բայց արեստում դա տեղին չէ, հետեւաբար, ատելի լաւ է լռել:

- Հետեւանքը՝ Դուք Չեր սերնդի միակ երգիչն էք, որի նկատմամբ «ye-ye»-ի կողմնակիցները հանդուրժողական են եղել:

- Այո, քանի որ ես շօշափել եմ թեմաներ, որոնք հարազատ են նրանց. ես մեկնում եմ, ես վերադառնում եմ, նա ինձ լքել է, նա իր կեանքում ուրիշն ունի, նա գիրացել է, ես ուզում եմ գնալ դէպի արեւը... Մի խօսքով, ես մնացել եմ այն, ինչ եղել եմ՝ սովորական մարդ: Յաջողութիւնը եւ տարիքը պարտաւորեցնում են: Ես այժմ միայն ատելի վստահ եմ, քան առաջ: Ես երկար ժամանակ անվստահ եմ եղել ու դեռ հիմա էլ, երբ գնում եմ ինչ որ լաւ ծանօթ միջավայր, անվստահութիւնս անմիջապէս երեսն է գալիս, ինչպէս իւրը՝ ջրի երեսին:

- Դուք առաջինն էիք, որ խօսել էք սիրոյ մասին այդքան զգացմունքային:

- Ես գրել եմ, ինչ ցանկացել եմ գրել՝ առանց մտահոգելու՝ այդ մասին կը գրի՞ թերթի առաջին էջերում, իմ նկարը ինչ չափով կը տպագրի:

- Ժան Կոկտօն մի անգամ գրել է, որ Դուք անյուստիւն էք երգում: Մինչդեռ Դուք խիստ լաւատես մարդ էք երեսում...

- Այո՛, ես լաւատես եմ եւ ամէն ինչ անում եմ, որ երեխաներն էլ այդպիսին լինեն: Իմ կարծիքով ծանր անցեալ ունեցողներն ատելի են հակած լաւատես լինելու: Ես կուզէի ապրել մի միջավայրում, որը բացառապէս լաւատեսներից կազմած լինէր, քանի որ լաւատեսութիւնը շէնացնող, կառուցող է. չէ՞ որ ամէն ինչ պէտք է լինի կառուցած, վերակառուցած, մտածած, վերամտածում... Աշխարհը պէտք է միշտ շարժման մէջ լինի: Կանգնած ջուրն, ի վերջոյ ճահճանում է, մինչդեռ հոսող ջուրը մաքուր է ու գեղեցիկ:

- Դուք շատ չէ՞ք անճանաչուած Չեր երգերում, որոնց իրական հերոսը ինքներդ չէք:

- Այո, բայց ես դրան դեմ չեմ, քանի որ բեմի վրայ պէտք է այդպէս լինի, պէտք է, որ արտիստը գուգահեռներ անցկացնի իր փոքրիկ դժբախտութիւնների եւ երգերում նկարագրածների միջեւ: Միշտ ասել եմ, որ ես երգի դեղագործ եմ եւ պարզապէս սպեղանի եմ դնում վերքի վրայ: Դրա անգեղութիւնը երկար չի տեսում, բայց դեղագործի պարտականութիւնը տեսալ պահին ցարը մեղմացնելն է: Երկարատեւ բուժման համար պէտք է խորհրդակցել բժշկի հետ:

«Ժամանակակից աղանդները Հայաստանում»



Մայր աթոռ Ս. Էջմիածնի քրիստոնեական դաստիարակութեան եւ քարոզչութեան կենտրոնը օրերս լոյս ընծայեց «Հոգեւոր գրադարանի» 24-րդ հրատարակութիւնը: Դա՝ Մայր աթոռի հոգեւոր ճեմարանի դասախօս Մերժ Մայիլեանի «Ժամանակակից աղանդները Հայաստանում» աշխատութիւնն է, որ նւիրւած է Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակելու 1700-րդ եւ Վարդանանաց հերոսամարտի 1550-րդ տարեդարձներին:

319 էջանոց գիրքը բաղկացած է գրքի խմբագիրներից Բագրատ արեղայ Գալստեանի «Երկու խօսքից», հեղինակի «Իբրեւ նախաբան»-ից, եօթ գլուխներից, յաւելածից եւ անւանացանկերից:

«Իբրեւ նախաբան» բաժնում Ս. Մայիլեանը ներկայացնում է իր ուսումնասիրութեան մեթոդաբանական, տալիս անհրաժեշտ բացատրութիւններ: Նա յայտնում է, որ «գիրքը նախատեսւած է քարոզչական կենտրոնների, կրօնի ուսուցիչների եւ բոլոր նրանց համար, ովքեր հետաքրքրուում են աղանդներով»:

Առաջին գլուխը նւիրւած է աղանդների դասակարգմանն ու նրանց առանձնայատկութիւններին: Հեղինակն աղանդները դասակարգում է երկու մեծ խմբերով՝ քրիստոնէական հետ անմիջական առնչութիւն ունեցողներ եւ ոչ քրիստոնէական աղանդներ, տալիս իրաքանչիւր խմբի մէջ մտնող ենթախմբերը, ներկայացնում աղանդների ընդհանուր գծերը (Էկլեկտիզմ, սինկրետիզմ, յանդուրձանութիւն, վախճանաբանութեան եւ յայտնութիւնների նրկատման խոր յակում եւ այլն):

Գրքի յաջորդ վեց գլուխները նւիրւած են Հայաստանում արմատներ գցած հիմնական աղանդներին: Այս ծաւալի կէտը յատկացւած է Եհովայի վկաներին: Ծաւալային առումով յաջորդաբար տեղ է յատկացւած մորմոններին, հոգեգալտականներին եւ ադւենտիստներին (գալլստականներ), իսկ «Կենդանի հոսք» եւ « Տնային խմբակային եկեղեցի» աղանդներին՝ ընդամենը մի քանի էջ:

Բոլոր գլուխներում հեղինակը նախ տալիս է աղանդի առաջացման ու տարածման պատմութիւնը, ապա ներկայացնում է աղանդի վարդապետութեան հիմնական դրոյթները, որից յետոյ Ս. Գրային եւ հայրաբանական գրականութեան օժանդակութեամբ պարզաբանում է աղանդատուների աստուածաբանական եւ այլ զանազան դրոյթները:

«Հաւելածում» բերած են աշխատութիւնում հանդիպող մի շարք եզրերի եւ հասկացութիւնների բացատրութիւններ:

Յաւօք, հեղինակը սահմանափակել է աղանդների կրօնական վտանգատրութիւնը բացայայտելով միայն: Համարեա չի գրել աղանդների Հայաստանում յայտնւելու պատմութեան, աղանդատուների հաւաքագրման նրբագոյն մեխանիզմների եւ մարդկանց զմբիացման «արեւստի» մասին: Համարեա ամբողջովին անտեսել է

աղանդատրական գործունէութեան ներկայացրած վրտանգը Հայաստանի եւ ընդհանուր վերցրած հայ ժողովրդի ազգային անվտանգութեան համար: Փորձ չի արել աղանդատուների որոշակի գործունէութեան (օրինակ՝ արխիւներ հաւաքելու մորմոնների մոլուցքի) եւ օտար գաղտնի սպասարկութիւնների կապերը բացայայտելու ուղղութեամբ: Բառ անգամ չկայ պետական օղակներում աղանդների ներթափանցման մասին: Այն տպաւորութիւնն է ստացւում, որ հեղինակն իր առաջ նպատակ է դրել պաշտպանելու Հայաստանեայց եկեղեցին եւ ոչ՝ Հայաստան պետութիւնն ու հայ ազգը: Տեղ- տեղ հեղինակը տուրք է տւել յուզական զեղումների, որի պատճառով էլ թոյլ է տւել որոշ թերիներ. օրինակ՝ եեովականների երկրորդ նախագահ, դատաւոր Ռուտեր Ֆորդի մասին գրում է, որ նա «մի քանի դասարանի կրթութիւն» ուներ: Ի՞նչ խօսք, մման սայթաքումները, ակամայ, կարող են շահարկել աղանդատուների կողմից:

Յոյս ունենք, որ հատորի յաջորդ վերահրատարակութիւններում եւ աղանդատուների դէմ ուղղւած քարոզչական գործունէութեան մէջ հաշի կառնեն վերոնշեալ բացթողումներն ու վրիպումները: Չէ՞ որ օտարածին, ազգաբանդ ու եկեղեցաբանդ աղանդների դէմ պայքարը ոչ միայն Հայաստանեայց եկեղեցու, այլեւ Հայաստանի պետութեան եւ ամբողջ հայ ազգի սրբազան պարտականութիւնն է: Այս տեսակետից էլ Մերժ Մայիլեանի «Ժամանակակից աղանդները Հայաստանում» աշխատութիւնը թէւ ոչ ամբողջական, այսուհանդերձ, շնորհակալ քայլ է այդ ուղղութեամբ: ■

Գ. Յ. Ազգ օրաթերթ 22.11.2000



Շար. էջ 13 -ից

- Մորիս Շեալիեից եւ Ժան Մայրոնից յետոյ ոչ ոք Միացեալ Նահանգներում այնպիսի յաջողութիւն չի ունեցել, ինչպէս Դուք:

- Դա երեսունհինգ տարւայ աշխատանքի արդիւնք է: Եւ յետոյ, եւ այնտեղ չեն գնացել ինչ-որ բան վաճառելու համար, այնտեղ ներկայացրել են այն, ինչ արել են ամենուր: Ջազ չեն երգել, որովհետեւ ջազային երգիչ չեն: Արեթ Ֆրանկլինը յայտարարել է, որ եւ իր իմացած միակ երոպացի երգիչն են, որը ստույ է երգում: Եթէ Ֆրանսիայում գտնում են, որ ստույը ուղղութիւն է, իրենց մօտ՝ Ամերիկայում, ցանկացած տղայ, որը սրտանց է երգում, համարում է ստույ ոճի երգող:

- Երբեւէ վախեցե՞լ էք հնամալ:
- Ես չեմ կարող հնամալ, եւ միշտ նոյն բանն են անում:

«Liberation» 24.10.2000թ.
Թարգմանեց Շուշանիկ Աղաբէկեանը
ԸՇ օրաթերթ 16.12.00

Մշակոյթ

Ու հետեւելով նախնեաց աւանդոյքներին՝
Գեղամ Մարեանն էլ Խորհրդային Հայաստանի
10-ամեայ յորելեանի առթիւ երգում էր.

*Հազար շեփոր հնչեն թող
Այս առաւօտ,
Հազար թմբուկ խփեն թող
Այս առաւօտ.
Լոյսի հեղեղ, լոյսի տօն է,
Խնդրութիւն.
Հազար շեփոր հնչեն թող
Այս առաւօտ:*

Նկատու՞մ էք, այս շեփորն էլ, որ մեր լեզվին
անցել է ատրերէն շիֆոտրասա հոմանիշից, ունի
ինչ-որ տօնա-կան հանդիսատրութիւն: Մեմական
լեզուներում այս բա-ռը «շեփոր» իմաստից առաջ
նշանակել է «տղջիւր, կո-տոշ», իսկ աւելի էլ առաջ՝
«վայրի այծ»:

Ի՞նչ կայ որ: Երբայեցերէն յորելե-ն էլ նախ
նշանա-կել է «խոյ», յետոյ՝ «խոյի եղջիւր», հուսկ
միայն՝ «շեփոր»:

Իմացէք, թէ ո՛վ ինչից էր շեփորը պատրաստում:

Շար. 2

Իտիեր մայրենի լեզվի մասին

Մայա Աւագեան

²² §¶ ðàðàÒ | ´² è օ ð օ օ §Մ² ք² ՄæàÒ | ´² è օ ð
-Գնում է գործը, Հոփիսիմէ մօրաքոյր,- ասաց
Մարիամը...

-Անկիւնաքարերը չկան, մտածիր, թէ չէ չի գնայ
գործը:

-Ինչպէ՞ս են գործերը, կալանատր Յակոբեան:

-Գնում են (գեղ. գր):

Բայց միայն գործը չէ, որ գնում է: «Գնում են» նաեւ
մարտերը. «Ու-ն-գ-ն-ա-կ-ա-տ-ում թե՛ մարտեր էին գնում»,
շարժումները. «Մեր արձակում լայն ուղի դուրս գալու
շարժումներ են գնում» շինարարութիւնը. «... թափով շի-
նարարութիւն է գնում» եւ այլն: Այսպէս, բանատր խօս-
քում եւս գնում են՝ ներկայացումը, կինօնկարը, ժողովը,
քննարկումը, ուսումնասիրութիւնը, խօսակցութիւնը, դա-
տավարութիւնը, աշխատանքը, պարապմունքը, վէճը,
բերքահաւաքը, հունձը, վարուցանքը եւ այլն, եւ այլն:
Շարքը կարելի է երկարացնել, բայց... մինչեւ ո՛ր եւ
մինչեւ ե՛րբ: Էլ ինչի՞ համար են մեր լեզուս՝ *կատարել,*
ընթանայ, վիճել, մղել, տեղի ունենայ, բեմադրել, ցուցա-
դրուել եւ բազմաթիւ ուրիշ բայեր, որոնք մտաացութեան
տալով՝ այսպէս անգթօրէն դոփում ենք միեւնոյն բառի
շուրջ:

Եթէ նկատել էք, արդէն վաղուց ի վեր «հարցերը» կան
«խնդիրները» մեզանում համարեա դադարել են *յա-*
րուցել, արծարծել, առաջ քաշել, առաջ գալ, ծագել, ծա-
ռանալ, նոյնիսկ՝ *դրել*: Դրանք միայն եւ միայն *բարձ-*
րացում են: Յաճախ լրագրում առանձին խորագրով

հարցեր ու խնդիրներ են բարձրացնում տնտեսավարնե-
րը, աշխատատրները, ընթերցողները եւ ուրիշներ: Լեզու-
կան այս կաղապարը լրագրային ոճի մէջ ընդունելուց ու
ամրապնդելուց յետոյ հեշտութեամբ թափանցում է խօ-
սքի միւս ոլորտները. *բարձրացում* են սխալներն ու թե-
րութիւնները, յաջողութիւնների հետ նաեւ անյաջողու-
թիւնները, նոյնիսկ... կերպարը («Պէտք է յուսալ, որ
պատմաբանները *կը բարձրացնեն*... գորավար է. Մ. Մե-
րեքրեակովի կերպարը»), հիւանդանոցի դռներին գրում
է, «Քաղաքում գրիպ հիւանդութեան բարձրացման պատ-
ճառով հիւանդների տեսակցութիւնը չի թոյլատրում», իսկ
ռադիօն յայտնում է. «Նկարչի ցուցահանդէսում
բարձրացած են շատ կարեւոր մտքեր (»)»:

Այդպէս էլ *բարձրանալ* բայն է փոխարինում *ելնել, վեր*
կենալ, ոտքի ելնել կանգնել, ոտքի կանգնել բայերին. «...
նազողը *բարձրանում* է տեղից», «*Քարձրանում* են եւ կա-
մաց դուրս ելնում բակ», «Ասում են, թէ վաղը *բարձրա-*
նալու ենք » (խօսքն ամենեւին էլ սարը ելնելու մասին չէ,
այլ միայն՝ մեկնելու, ճամփայ ընկնելու): Բառի այսօրի-
նակ գործածութեան անճշտութիւնն ու անիմաստութիւնն
է վկայում հետեւեալ օրինակը: «Աղջիկը մեծ ճիգ թափեց
տեղից *բարձրանալու* եւ իջնելու համար»:

Կարելի է տասնեակներով պատճենել ներքոբերեալ
արտայայտութիւնները, որոնք յաճախակի գործածում
են առօրեայում, յատկապէս ժողովներում ու խորհրդակ-
ցութիւններում:

«Քաղաքի մաքրութիւնը *կանգնած* է ամէն մի երե-
ւանցու հոգների կենտրոնում»: Ունենք *յառնել* արտա-
յայտիչ բայը, բայց չգիտես ինչու «... մեր աշքերի առջեւ
իր ողջ մեծութեամբ *կանգնում* է մեծ գրողի կերպարը»,
իսկ *տեղն ընկնելու* փոխարէն էլ յաճախ՝ «Ամէն ինչ
կանգնում է իր տեղը»:

Կանգնեցնել՝ ազրեսիան:

Կանգնեցնել՝ խելահեղութիւնը:

Կանգնեցնել՝ խտտանի արտադրութիւնը:

Կանգնեցնել՝ աշխատանքը:

Որքա՛ն ենք լսում նման արգելակող կոչեր, որոնց
հայեցի համարժէքն արտայայտում է *դադարեցնել,*
ընդհատել, արգելել, կասեցնել եւ ուրիշ բառերով:

-Որտե՞ղ ես *կանգ առնելու*: Եկ մեր տուն:

-Շնորհակալ եմ, ես արդէն *կանգ եմ առել*
հիւրանոցում:

Այսպէս շատ յաճախ *կանգ ենք առնում* հիւրանոցում,
հանրակացարաններում, մեր բարեկամների տներում եւ
այլուր, մոռանալով, որ մեր նախապապերը հայոց պատ-
մական իջեւանատներում ոչ թէ կանգ էին առնում, այլ՝
իջեւանում, կենում, մնում, տեղադրում, հանգրւանում,
սպաստանում, սպաստան գտնում եւ միշտ էլ՝ այս բառե-
րի իմաստների նրբերանգումով, որովհետեւ հետապնդ-
նումից մազապուրծ լինելիս՝ նրանք *սպաստան էին գրտ-*
նում, սպաստանում, իսկ հակերով բեռնած իրենց քա-
րաւաններով ժամանելիս՝ առողջ-փառող *իջեւանում էին*
կամ *հանգրւանում*:

Շար. 2

Որպես ԼՈՒՍԱՐՔԱՆՈՒԹԻՒՆ



Ի լուսարանութիւն «Ալիք»-ի 21 սեպտեմբերի համարում պրն. Անդրանիկ Հովեանի գրութեան, անհրաժեշտ ենք գտնում նախ ասելու, որ նա անպատել է ամբողջ իրանահայութեան, ասելով որ՝ նա իր պատմութիւնից շատ տեղեկութիւն չունի, որի առթիւ թէ՛ անձամբ եւ թէ՛ հեռախօսով քանի հոգիներ իրենց բողոքն ու դժգոհութիւնն են յայտնել, ցանկանալով, որ խիստ պատասխանեն այդ մեղադրանքին, որից խուսափում են եւ, յայտնելով, որ իզուր է ներութիւն քաշել սրանից – նրանից հարցնելու, որ ի՞նչ գիտէք իրանահայութեան անցեալից, ոչ միայն մեզ մօտ, այլ բոլոր ազգերի մօտ եւս պարագան նոյնն է, բոլորը չէ որ լրիւ գիտեն իրենց պատմութիւնը:

Դարձեալ կրկնում են, որ ներկայ իրանահայերը բացի Ատրպատականից, Շահաբասեան գաղթականութեան ժառանգորդներն են, անցեալից միայն յուշ է մնացել: Այս մասին յիշած է Սեբեոսի, Փաստոս Բիզանդացու Ալ. Պոյաճեանի «Պատմութիւն հայ գաղթականութեան», Յարութիւն աւ. քննյ. Հաճեանի «Հայ եւ պարսիկ բարեկամութիւնը» (Թեհրան 1945 թ.) «Հայոց տաժանքի ճամբաներով» (Թեհրան Ա. հատ. 1965թ.) «Հասկ» ամսագրի Ներսէս Արք. Բախտիքեանի «Հայերը Խուզիստանի մէջ» յօդածում (1989թ.) եւ այլուր:

Ապա, ես իմ կեանքում ու գրութիւններում, երբէք չեմ յաւակնել, որ ես գիտեմ եւ ուրիշը չգիտէ, յաւակնութիւնը հէնց իրենը՝ պրն, յօդածագիրն է, որի ունակութիւնը ուրիշի վրայ է բարդում:

Եւ յետոյ, ինձ շատ մեծ զարմանք պատճառեց, այն անտեղի մեղադրանքը, որ վանքի գրադարանից ոմանք դժարութիւն են ունենում օգտուելու: Մա մի բացարձակ զրպարտութիւն է, քանի որ, գրադարանը բաց է բոլորի առջեւ եւ ըստ կանոնների որեւէ խտրութիւն չի դրում, հայ, պարսիկ եւ այլ ազգի, թէ անձամբ, նամակով, անգամ հեռախօսով, զանազան քաղաքներից եւ նոյնիսկ արտասահմանից հարցումներ են լինում, որոնց պատասխանում է ըստ հնարատրին, փաստ՝ տասնակներով գրքերն ու մանուրը հայերէն, պարսկերէն եւ այլ լեզուներով, որոնք իրենց գոհունակութիւնն ու շնորհակալութիւնն են յայտնում այդ առթիւ:

Անգամ իմ անձնական գրադարանից եւ գրական արխիւներից, շարունակ ի դիւրութիւն ուսումնասիրողների, գրքեր ու յօդածներ են տանում գրադարան:

Խիղճն էլ լաւ բան է , մի քիչ խիղճ պիտի ունենալ եւ անտեղի մէկի չմեղադրել:

Նոր Զուղա
2. Հոկտ. 2000 թ.
Լ. Գ. Մինասեան

ԾՊԵՅՆՈՒԹՅԱՆ ՏՆՈՒՄ

Ես ուզում եմ իմ գնահատանքի խօսքն ուղղել, խմբագրութեանդ անվերապահ կեցուցքի համար, որը ցուցաբերում էք ազգային խնդիրների եւ դժարութիւնների նկատմամբ: Այս կեցուցքը պատճառ է դարձել, որ մեր ազգային մարմինները եւ կազմերը համայնքիս փոխանցեն մանրամաս բացատրութիւններ ծագած դժարութիւնների եւ բարդութիւնների մասին, որը կարդալով եւ տեղեկանալով կարողանում ենք, ատելի ճիշտ դատողութիւն ունենալ:

Արտեմիս Մ.



Ուղղում

Թերթիս համար 17-ի, էջ 13-ում տպագրել է «Ռ՞վքեր են գիտակից ծնողները» խորագրի տակ մի յօդած, որը մի հատած է արեւմտահայ հոգեբան Շաքէ Եկատեանի «Մեր փոքրերը եւ նոր աշխարհը» գրքից, իսկ յօդածը տպագրել է Մելինէ Փափագեանի անուն տակ, որի համար յարգելի ընթերցողների ներողամտութիւնն ենք հայցում:

Խմբ.

ՏԻՐԱՆԵՐ

Լոյս երկշաբաթաթերթը իր վշտակցութիւնն է յայտնում ներթոյիշեալ նորոգ հանգուցեալների անմիջական հարազատներին և բոլոր սգակիրներին:

- Մարուս Մանուկեան (Արթուրեանց)
- Մարտին Դէլիդ
- ՕՖիկ Ալլահվերդեան (Մարգսեան)
- Թովմաս Շահերդեան
- Մարգարիտ Նորեան
- Մատթէոս Նորատեան
- Հենրիկ Թամրազեան
- Վերթիկ Ղարախանեան (Յարութիւնեան)
- Մարիոն Չափալովեան
- Անժէլ Բեշիբեան
- Մամսոն Հնիպերդեան
- Արմենուի Հայրապետ
- Տ. Մեպոսի Ա. քնն. Տէր Գալստեան
- Անահիտ Թաղմանեան

Առողջ Մնալ Ծամբորդութեան ընթացքում

Վերջին ուղեորութեանս ընթացքում, Պերուում, մի սաստիկ կերակրային թունաւորում ունեցայ: Ծաշել էի Կակաո քաղաքի մի երեւոյթապէս առողջապահական պայմանները լրացնող ճաշարանում:

Ծամբորդութեան ժամանակ, մարդ ընդհանրապէս հեշտութեամբ է հիւանդանում եւ դա լինում է այն պատճառով, որ մեր մարմնի մարտողական սիստեմը անծանօթ է տեղական կերակրատեսակներին, զրտնրում է առողջապահական կասկածելի պայմաններում եւ ենթակայ է լինում մանրէների եւ վիրուսների, որոնց դէմ դեռ դիմադրականացում չունի մեր մարմինը:

Հնարատր խնդիրների դէմ պաշտպանել կարողանալու համար, ահա մի քանի առաջադրանքներ՝

Ձեզ պաշտպանեցէ աղիքային վարակների դէմ

Առաջնորդէ չգրած հետեւեալ օրէնքով «Եփել, եռացնել, կեղել եւ ապա սպառել... եւ կամ հրաժարել կասկածելի ուտելիքներից»: Խուսափեցէ սալադներից, մրգերից եւ կանաչեղէնից. կարող են դրանք լրացած լինել ոչ՝ սանիտար ջրով: Խոյս տուեցէ փողոցային վաճառորդների մատուցած ուտելիքներից:

Շատ երկրներում լաւագոյն ընթացքն է չիւմել ծորակներից հոսող ջուր, այլ բարարուել 2շի մէջ լեցած ջրով- մոյնիսկ ատամ լանալու համար: Նոյնը պիտի անել սառցի կուրիկների (խստամարդիկներ) մասին, քանի ջուրը սառցակալեցնելը չի ոչնչացնում հիւանդութիւն պատճառող բոլոր մանրէները:

Կատարեցէ հարկ եղած պատուաստումները

Ընկերներիցս մէկը, Կենտրոնական Ամերիկայում վարակեց **Շեպաստիտ Ա**-ով եւ ստիպւած անաւարտ թողեց իր արձակուրդը: Դա մի հիւանդութիւն է, որը դիւրաւ կարելի է կանխել, պատուաստելով նախքան երկրից մեկնումը: Ստուգելու համար, թէ ո՞ր պատուաստն է ձեզ հարկաւոր, կարող էք դիմել որեւէ առողջապահական կենտրոն եւ կամ կապել պատկան հեռախօսային համարին:

Նքանախ Բոլիվիայի անտառային շրջաններ ուղեւորելս, սկսեցի հակա- մալարիայի դեղահատեր գործածել մէկ շաբաթ առաջ, ուղեւորութեանս ընթացքում եւ մի քանի շաբաթ եւս վերադարձից յետոյ:

Շետների վերցրէ՛ք առօրեայ սպառման դեղամիջոցներ

Դեղագրով կամ առանց դեղագրի ծախսող դեղերը պահեցէք իրենց յատուկ ծրարների կամ տուփերի մէջ: Ձեզ հետ ունեցէք յաւելեալ դեղորայք, օր. ինսուլին ու սրսկման պարագաներ, աստմայի դէմ ջրափռչի (spray) եւ այլն, որովհետեւ եթէ դրանց կարիքն ունեցաք՝ հնարատր չի լինի դիւրութեամբ գտնել դրանք ձեր այցելած երկրում: Մաքսատնային բարդութիւններից զերծ մնալու համար, լաւ է որ ունենաք դեղերին համապատասխանող դեղատոմսեր:

Բժշկի խորհուրդն ամէք անտի-բիոտիկներ վերցնելու կապակցութեամբ, օրինակ՝ ciprofloxacin (cipro) կամ oflaxacin (Flaxin) աղիքային վարակների համար: Ես միշտ Lopomeride (Imodium) եմ վերցնում հետս փոքրաքիթի դէմ:

Նաեւ ձեզ հետ ունեցէք վիրակապ, ունելի, արեւի գլխարկ եւ միջատներ վանող փոշիներ: Մալարիայի շրջանների համար ընտրեցէք (diethyltoluamide) (DEET) 30% խտութեամբ: Աւելի թոյլ խառնուրդը յանձնարարելի է երեխաների պարագայում:

Ապահովագրական ընկերութիւններից հետաքրքրուեցէք թէ ի՞նչ հնարատրութիւններ կան արտասահման ճամբորդելիս բժշկական ապահովագրութիւն ունենալու համար:

Ծամբորդութեան ընթացքում հիւանդանալու դէպքում անյապաղ դիմեցէք բժշկի

Բարձր ջերմ, մարմնի հեղուկների կորուստ ունենալու, կամ որեւէ այլ տկարութեան դէպքում լաւ կանէք դիմել հիւանդանոց: Ձեր հիւրանոցը կարող է ձեզ օգնել ձեր լեզվին ծանօթ բժիշկ գտնելու խնդրում:

Եթէ ունէք ակերզիայի, խոշոր վիրահատման կամ որեւէ առողջական լուրջ խնդիր, մի համառօտ գրաւոր զեկոյց շատ օգտակար կարող է հանդիսանալ օտարական բժշկին:

Նախապատրաստեցէ՛ք

Ձեր ուղեւորութիւնը սկսեցէք ծրագրաւորել մեկնումից վեց շաբաթ առաջ: Այդպիսով հնարատրութիւն կունենաք անհրաժեշտ պատուաստումները եւ այլ կարգադրութիւնները ժամանակին կատարել, որից յետոյ միայն կարելի է ձեզ մաղթել՝ ԲԱՐԻ ԵՐԹ՝:

*բժ. Տիմոտի Մակքալ
Թարգմանեց Լեւոն Ահարոնեանը*

Ժամանց

ԽԱՉԲԱՌ- ՀԱՄԱՐ 13

Կազմեց՝
Կ. Տ. Յովհաննիսեանը

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Միջին դարերի հայ ճարտարապետ, գիտնական- բռնող գործիչ:
2. Ուսուցիչ- հիւանդ գործիքներից- Իրանի հիւսիսային քաղաքներից:
3. Պատկեր- շինծու, սարքավի:
4. Սրա վերջը լաւ չի լինում- ատրուշան- անձնական դերանուն:
5. Հին ցեղ, որից սերում են պարսիկները- ձեռնահասութիւն, ճարտարութիւն:
6. Փոքրիկ- վերջը խախտուած յանգ... -կանաչի օտար անուն:
7. Շրջան, որ անցկացրեց Հայաստանը Խ. Միտրեան փլուզումից յետոյ- կապոյ:
8. Դիմամիկ- զարդեղէններից:
9. Տեսա- հայերէնի վերջածանցներից՝ դառնալու իմաստով- մտորային փոքր մաս:
10. Յարաբերական դերանուն- խայտաբղետ, ճաճանչաւոր- սեւի խորհրդանիշը:
11. Ճակնդէղ- աջից՝ գեղարուեստական ելոյթներից- իրաքանչիւր երկրի պաշտպանութեան գլխաւոր միաւորումը:
12. Արքայական խորհրդանիշ- բազում: Կանաչի օտար անուն:
13. Տիրահռչակ, լաւ համարում չունեցող- գերմանացի կոմպոզիտոր- արտասել:
14. Քերականութեան մէջ՝ իբրեւ յատկանիշ, յատկանիշի կիրառութեամբ- աջից՝ կանգնիչ:
15. Ջրանցք (օտար)- պայթուցիկ միւթ:

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1										■					
2						■					■				
3					■								■		
4				■									■		
5	■				■										■
6								■				■			
7									■			■			
8		■							■						
9					■				■						■
10				■						■			■		■
11						■				■					
12	■				■					■					
13									■				■		
14													■		■
15		■							■						

Ուղղահայեաց

1. Տղայ զաւակ- դիւրավառ, բռնկելիք փայտ- սարսափ:
2. Եկեղեցական պիտոյքներից- հայոց լեռներից:
3. Խառը վիճակ, եռուզեռ- ասում են երբեմն դանակ է դառնում:
4. Նազարան, որ այստեղ վերջը փափուկ է հնչել- գործածում է բարդութիւնների երկրորդ մասում՝ պայմանը խախտող, դաւաճանող իմաստով- առհասարակ կոչում են թշնամի կուսակցութիւնները:
5. Անի- տեղեկանալը- մատ, մեծ մայր:
6. Կրակին կամ բարձր տաքութեան դիմացող- ցածից՝ դեղին եղանակը:
7. Դժգոյն- խարել, անխելք դառնալ:
8. Ոչ քանակային- քացասական, ոչ ընդունելի:
9. Եկեղեցական մեղեդիներ, որ այլ անունով կոչւում են կանոն- յարդրակցութիւն- տնային թոչուն:
10. Բնութեան զարթօնքը- գիմու կամ քացախի երեսի սերը- իզական անուն:
11. Առաջին կերակուրը- անջատ-փայտ, ցուփ:
12. Կրեմ, իւր- երեւոյթ, տեսարան, երազ- չորրորդ ձայնանիշը:
13. Երկրագործական աշխատանք- ծանրութիւնը ձեռքից տալ:
14. Մակերեսի միաւոր- տես՝ հորիզոնական 5- փոխաբերական իմաստով՝ դառնութեամբ ու մաղձով լցւած:
15. Հնում ասպետին ընկերակցող անձ- հագուստի ձեւ (օտար):

ԼՈՒԵՔ
ԽԱՉԲԱՌ

ՍՏԱՅԷ
ՆԻՐ


Խաչբառ համար 12-ի
լուծւած տարբերակը
տեսնել՝ էջ 24-ում:

Ժամանց

Շ Դայաստանի հանրաժանօթ գրող եւ երգիչժարան՝ Արամայիս Սահակեանը այսպէս է ասում.

Ծիծաղը ուժի նշան է

Պատանի եւ պիտանի՝ բարեկամներ: Ամէն մարդու կեանքում լինում են ուրախ եւ տխուր պատմութիւններ: Ոմանք ատելի շատ յիշում են ուրախը, ոմանք՝ տխուրը: Ինչպէս գիտէք, ուրախ մարդն իր շուրջն ուրախ աշխարհ է ստեղծում, մտայլը՝ մտայլ: Ընդհանրապէս չար մարդը տարերային աղէտ է: Մշտապէս դժգոհներին եւ անընդհատ իրենց հոգսերից տրտնջացողներին, ճիշտն ասած, այնքան էլ հաճոյքով չեն լսում: Ամէն ինչ չափով պէտք է լինի: Բարեկից մարդն աշխատում է թեթեւացնել ուրիշի հոգսերը, միշտ պատրաստ է ասելու՝ «Ինչո՞ւ օգտակար լինեմ»: Բարի եւ կատակասէր մարդը շրջապատի ոգին է, ամենուր ցանկալի հիւր: Ասած է. «Այնտեղ, ուր ծիծաղը շատ է, բժիշկը քիչ է»: Բարի կատակը փրկարար օդակ է կեանքի ծովում: Մի ժամայ կատակը մի տարայ կեանք է: Ասում են՝ ով չի ծիծաղում, կամ ուղեղն է խանգարած, կամ՝ ստամոքսը: Իգուր չէ, որ ծիծաղը համարում է ամենաբուժիչ դեղը՝ մանաւանդ մեր «ստրեսային դարում»: Շատերս սովորել ենք՝ ամենաթեթեւ հոգան էլ համաշխարհային ողբերգութիւն սարքել («Մի կաթիլ մեղր» ուսանելի գործ է): Մի մարդ հարցնում է իմաստունին, թէ ինչպէ՞ս անցնի շան մօտով, որ շունը չկծի, իմաստունը պատասխանում է. «Շան տեղ մի դիր»: Ամէն մարդ ունի դարդ: Ինչքան դարդ բարդանում է, ժպիտի կարիքը շատանում է: Փոքր բաներից փոքրոգիներն են զայրանում: Ասած է՝ «Եթէ կուելու ես՝ կուիր յետոյ...»: Ծանր թուացող որոշ երեւոյթների պէտք է թեթեւ ժպով նայել, ժպիտով յաղթել: Մեր ժողովուրդը, որ հազարաւոր զրկանքներ ու տառապանքներ է կրել, յաղթել է նաեւ... ժպիտով:



- ✓ Ինչպէ՞ս ես, Շիրազ,- հարցրի:
- Արարատի՛ պէս,- արագ պատասխանեց նա:
- Իսկ Արարատն ինչպէ՞ս է:
- Ի՛նձ պէս:
- Ի՞նչ կասես «Արարատ» քիմի մասին:
- Եթէ «Արարատն» իր հոգու մէջ Արարատ չպահէ, թոյլ կը խաղայ, դա՛ է նրա ուժը:
- Այդ դէպքում՝ ինչո՞ւ ես մէկ-մէկ թոյլ բանաստեղծութիւններ գրում:
- Որպէսզի... հաւասարեմ միւսներիդ:



✓ Աշխարհաեռչակ ծանրամարտիկ Իրի Վարդանեանին հարցրի, թէ ո՞վ է աշխարհի ամենաուժեղ ծանրամարտիկը:

- Շուկայից վերադարձող կինը...,- պատասխանեց նա:
- ✓ Երբ Իրին այցելեց մեզ, իմիջիայլոց հարցրի.
- Չարմանալի մարդիկ էք գիւմրեցիքդ, ասում էք՝ էրթամ գը, աշխատեմ գը, սովորեմ գը: Էդ «գը»-ն ինչի՞՞ համար է:
- Հասկնա՞ս գը,- պատասխանեց Իրին,- դա էլ բառի տանող հրթիռն է:



- ✓ Մոսկւայում լոյս տեսած նոր գիրքս նիւրեցի Իրիին, բայց տեսայ, որ էջերից մէկը պատռւած է:
- Ոչի՛նչ, դարդ մի էնէ,- հանգիստ ասաց Իրին,- մէկ է՝ երեխաս գիրքս լրիւ պատռելու է:



Նկարչի Միալը

Նկարում՝ լեռնագագաթների հաւերժական ձիւնը շլացուցիչ կերպով փայլատակում է արեգակի ճառագայթների տակ: Նկարիչը երեակայութեամբ նկարել է այդ ձիւնապատ գագաթները, բայց մի սխալ է կատարել: Ո՞րն է այդ սխալը:

Լոյս.- Դուք ասեք ո՞րն է նկարչի սխալը: Պատասխանեք եւ ներ ստացեք: ☺

Թեւաոր խօսքեր

(Ս. Ս. Իշխանեան)

Ազատութիւն, Հասարակութիւն, Եղբայրութիւն
18-րդ դարի Ֆրանսիական բուրժուական յեղափոխութեան լոզունգն է: Պաշտօնապէս առաջին անգամ հրապարակել է 1793 թ. յունիսի 30-ին: Լոզունգը կրկնւած է 1948 թ. Ֆրանսիական սահմանադրութեան մէջ:

Ազգային Չոչեր

Յ. Պարոնեանի նոյնանուն գրքի վերնագիրն է, որը լոյս է տեսել 1878 թականին: «Ազգային Չոչերը» Պարոնեանի ամենատարածած երկերից է: Գիրքն ամփոփում է ժամանակի հասարակական- գրական մամուլի, թատերական, կրօնական գործիչների երգիծական դիմանկարները: Անխնայ ծաղրում են հասարակութեան գլխին չարիք դարձած այն մարդիկ, ովքեր իրենց համարում են ազգային բարեգործներ: Այդ մարդկանց Պարոնեանը ծաղրանքով անւանում է *ազգային Չոչեր*: Առօրեայ կեանքում այդպէս են անւանում նրանց, ովքեր իրենց վարքով եւ դիրքով յիշեցնում են Պարոնեանի հերոսներին: ■

Մարզական

Մրցաշրջան-2000-ի Հայաստանի 10 լաւագոյն մարզիկները

Արդէն տասնամեակներ շարունակ, մրցաշրջանի ավարտից յետոյ, հանրապետութեան մարզական լրագրողների հարցման արդիւնքում որոշուում են տարւայ 10 լաւագոյն մարզիկները: Հարցումն աւանդաբար անցկացրել է «Հայաստանի Ֆիզկուլտուրնիկ» (հետագայում՝ «Մարզական Հայաստան») թերթի խմբագրութիւնը: Իսկ վերջին տարիներում այն կազմակերպում է Հայաստանի մարզական լրագրողների Ֆեդերասիոնը:

ԱՐՄԷՆ ՍԵԼԻՔԵԱՆ

Ծանրորդ, քաշային կարգը՝ 77կգ. ծծնդավայրը՝ Երեւան, օլիմպիադայի բրոնզէ մեդալակիր, մարզում է վաստակաւոր մարզիչ Ռոբերտ Յովհաննիսեանի ղեկավարութեամբ: «Ա.Մելիքեանին ճանաչում եմ 18 տարեկանից, - պատմում է Սպորտվարչութեան ծանրամարտի պատասխանատու, վաստակաւոր մարզիչ Փաշիկ Ալաիվերդեանը: - Դեռ ԽՍՀՄ պատանեկան առաջնութիւններում նա դրսեւորում էր լաւ մարզիկին բնորոշ բարձր որակներ:

Ինչպէս իւրաքանչիւր մարզիկ, նա եւս ունեցել է վայրէջքներ: Սակայն դրանց հետեւել են վերելքները եւ աշխարհի ու Եւրոպայի առաջնութիւններում աստիճանաբար աճող արդիւնքները վկայում են նրա նպատակասլացութեան մասին:

Ամէն անգամ վերջին պահին ինչ-որ բան խանգարում էր վեր բարձրանալուն: Սակայն Միդնիում նա կարողացաւ լիարժէք դրսեւորել իր վարպետութիւնը եւ դարձաւ օլիմպիադայի բրոնզէ մրցանակակիր:

ԱՇՈՏ ԳԱՆԻԷԼԵԱՆ

Ծանրորդ, քաշային կարգը՝ 108 կգ. -ից բարձր, ծննդավայրը՝ Երեւան, Եւրոպայի կրկնակի ախտյեան, մարզիչն է հայրը՝ վաստակաւոր մարզիչ Ռոմիկ Գանիելեանը:

Մեծապայքարային մարզածներում գերծանր քաշային կարգի ամենահեղինակաւորն է: Եւ պատահական չէ, որ այս քաշային կարգում նաճած որեւէ մեդալ կրկնակի-եռակի անգամ պատուաբեր է: Առաւել եւս ծանրամարտում, երբ մարզիկը գործ ունի հսկայական ծանրութեան հետ:

Վերջին տարիներում մարզական երկնականարում սրբնթաց վեր խոյացաւ երեւանցի դիւցազն Աշոտ Գանիելեանի աստղը: Կարճ ժամանակահատուածում հայ հըսկան երկու անգամ ուժեղագոյնը ճանաչեց Եւրոպայում, ստիպելով իր հետ հաշի մատել աւելի փորձառու մրցանակներին:

Եւ պատահական չէ, որ Ա. Գանիելեանը Հայաստանի գլխաւոր օլիմպիական յոյսերից է: Սակայն մրցակիցների հրահրած դաւերի պատճառով, բայց պաշտօնապէս «դրայինգ օգտագործելու» պատճառաբանութեամբ Աշոտից յետ վերջեցեց օլիմպիական բրոնզ մեդալը: Այնուամենայնիւ՝ նա մնում է «Միդնի 2000-ի հերոսներից մէկը:

ՌՈՒԳԻԿ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ծանրորդ, քաշային կարգը՝ 69 կգ. ծննդավայրը՝ Գիւմրի, Եւրոպայի պատանիների կրկնակի ախտյեան, մարզիչն է վաստակաւոր մարզիչ Աշոտ Մխիթարեանը:

Երիտասարդական ախիւնով մասնակցեց Օլիմպիական խաղերին՝ գրաւելով 5-րդ տեղը: Դա նրա համար շատ բարձր արդիւնք է, որը որոշ առումով նաեւ անսպասելի էր մեզ համար: Պէտք է ասել, որ Ռուդիկին ընդամենը 2,5 կգ. չբաւականացրեց մրցանակակիր դառնալու համար: Սակայն մենք հաւատում ենք նրա ուժերին եւ վստահ ենք, որ դեռ դրսեւորելու է իրեն», - ասաց Փաշիկ Ալաիվերդեանը:

ԱՐՄԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

Ազատ ոճի ըմբիշ, քաշային կարգը՝ 63 կգ., ծննդավայրը՝ Մարտունու շրջանի Թագազիւղ, մարզիչներն են Շահվալադ Յովհաննիսեանը եւ վաստակաւոր մարզիչ Իւրի Բարայեանը: 1823 թ. Մուշի Լաթար քաղաքից նոր բնակավայր տեղափոխած ընտանիքի անդամների մըտքով չէր անցնի, որ 20-րդ դարի վերջում իրենց գերդաստանի ներկայացուցիչը անկախ Հայաստանի մարզական պատիւն է պաշտպանելու Օլիմպիական խաղերում:

Ընթշամարտը երեւի արեւան հետ է անցել Արշակին: Ժամանակին այս մարզածնով է զբաղել նրա հայրը՝ Գեորգին: Արշակը Հայաստանի կրկնակի ախտյեան է, ռէյտինգայի մրցաշարի յաղթող: Օլիմպիական խաղերը նրա համար երկրորդ խոշոր ստուգատեսն էին Եւրոպայի առաջնութիւնից յետոյ: Եւ հէնց չարաբաստիկ մրցափորձի պակասն էլ խանգարեց Միդնիում 5-րդ տեղից վեր բարձրանալ:

ԱՐԱՄ ՌԱՄՍՉԵԱՆ

Բռնցկամարտիկ, քաշային կարգը՝ 54 կգ., ծննդավայրը՝ Երեւան, 1997թ. աշխարհի բրոնզէ մեդալակիր, 1998թ. աշխարհի գաւաթի խաղարկութեան 3-րդ մրցանակակիր, 1999թ. Եւրոպայի գաւաթի խաղարկութեան արծաթէ մեդալակիր, 2000թ. Եւրոպայի առաջնութիւնում՝ 3-րդ տեղ, մարզիչն է վաստակաւոր մարզիչ Յ. Նազարեանը:

Այս տարի, մասնակցելով Ֆինլանդիայում կայացած Եւրոպայի առաջնութեանը, նաճեց բրոնզ մեդալ եւ ձեռք բերեց օլիմպիական վարկանիշ: Յաւրք՝ Միդնիում իր հնարաւորութիւններից ցածր հանդէս եկաւ: «Գտնում եմ, որ նրա անյաջողութեան հիմնական պատճառը թոյլատրելի սահմանից աւելի քաշ գցելն է: Ընդհանրապէս Ռամսեանը հակայարձակողական ոճի բռնցկամարտիկ է», - ասաց Սպորտվարչութեան մարզածնի պատասխանատու, վաստակաւոր մարզիչ Լեւոն Յովհաննիսեանը:

ՔՐԻՍՏԻՆԷ ՆԱԶԱՐԵԱՆ

Մամբիստուհի, քաշային կարգը՝ 56 կգ., ծննդավայրը՝ Երեւան, աշխարհի 7-ակի, Եւրոպայի 8-ակի չեմպիոնուհի, ջութայի A կարգի մրցաշարի 3-րդ մրցանակակիր, մարզիչն է վաստակաւոր մարզիչ Ռուբէն Խնկոյեանը:

Կարծում եմ ինքնին խօսում փաստ է, որ 1991 թ. սկսած 15 ոսկի մեդալ է նաճել աշխարհի եւ Եւրոպայի առաջնութիւններում: Այս տարի 8-րդ անգամ լաւագոյնը ճանաչեց Եւրոպայում: Իսկ աշխարհի առաջնութեանը չարիքազանց լաւ էր պատրաստել, սակայն Ֆինլանդական դժարութիւնների պատճառով մեկնարկից միայն 1,5 ժամ առաջ հասաւ մրցավայր, ինչը չէր կարող չանդդադառնալ նրա ելույթի վրայ:

Քրիստինէի սիրում հնարքը չորեքթաթ դրութիւնից ցաւեցնող հնարքն է: Ու երբ նա կիրառում է այն, կարելի է չկասկածել, որ մրցակիցը պարտուած է: Ֆիզիկապէս շատ

Մարզական

ուժեղ է: Անկախ Հայաստանի առաջին մարզուհին է, որին կը շնորհի սպորտի վաստակատու վարպետի կոչումը,- այսպես սանուհուն բնութագրեց Ռ. Խնկոյեանը:

ԲԱԳՐԱՏ ՕՀԱՆԵԱՆ

Բռնցկամարտիկ, քաշային կարգը՝ 91 կգ.-ից բարձր, ծննդավայրը՝ Գիւմրի, 1998 թ. աշխարհի երիտասարդների ախոյեան, 1999 թ. Եւրոպայի երիտասարդների 3-րդ մրցանակակիր, 2000թ. Եւրոպայի բրոնզե մրցանակակիր, մարզիչն է վաստակատու մարզիչ Վարուժան Դաթեանը:

«Բագրատը միշտ ձգտում է հասնել առելիին: Այս տարի չնայած 3-րդ տեղը զբաղեցրեց Եւրոպայի առաջնութիւնում, բայց օլիմպիական ռէյտինգ, ցուրտ չտուցաւ: Միշտ ձգտում է տիրել նախածեռնութեանը, թէև յաճախ շտապողականութիւնը խանգարում է: Կարծում եմ դա կապուած է մրցավորձի պակասի հետ, որը լրացնելու դէպքում կը կարողանայ մրցակցին թելադրել իր պայմանները», - նշեց Լեւոն Յովհաննիսեանը:

ԱՇՈՏ ԱՆԱՍՏԱՍԵԱՆ

Ճատրակորդ, ծննդավայրը՝ Երեւան, Հայաստանի բազմակի ախոյեան, եւրոպայի (խմբական) ախոյեան, օլիմպիադայի բրոնզե մրցանակակիր, ՖԻԴԷ-ի փոխնախագահ, Հայաստանի ճատրակի Ֆեդերասիոնի նախագահ ակադեմիկոս Վանիկ Զաքարեանը այսպէս բնութագրեց գրոսմայստեր Անաստասեանին. «Աշոտը նախ՝ շատ լաւ ընկեր է, նաեւ՝ հիւսնայի ճատրակորդ: Ստանբուլի օլիմպիադայում ոսկի մեդալի արժանացաւ 4-րդ խաղատախտակի վրայ արձանագրած արդիւնքի համար: Այն շատ առեւի բարձր կը լինէր, եթէ ընդհանրապէս խումբը լաւ խաղար»:

ՄՈՎՍԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Յունահռոմէական ոճի ըմբիշ, քաշային կարգը՝ 69 կգ, ծննդավայրը՝ Երեւան, 1997 եւ 98թթ. Եւրոպայի երիտասարդների բրոնզե մրցանակակիր, 2000թ. Եւրոպայի բրոնզե մրցանակակիր, մարզիչն է վաստակատու մարզիչ Էդիկ Սահակեանը:

«Մովսէսին, կարելի է ասել, յայտնաբերել է մարզիչ Յարութիւն Վարդումեանը: Հետագայում համատեղ ենք աշխատել նրա հետ: Աշխատելու մեծ ձգտում ունի. վերջին շրջանում նրա մօտ ստեղծագործական ջիղ եմ նկատել: Նա մարտական ոճի ըմբիշ է, չի սիրում պաշտպանել, ունի հնարքների հարուստ զինանոց: Երազում է դառնալ աշխարհի ախոյեան», - ասաց Էդիկ Սահակեանը:

ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Ֆուտբոլիստ, յարձակողական ոճի կիսպաշտպան, ՀՀ ազգային հաւաքականի մրցանակակիր, անցկացրած խաղերի եւ նշանակած գոլերի քանակով: Հայաստանի կրկնակի «Շիրակի» կազմում, որի աւագն է: Ծննդավայրը՝ Գիւմրի:

1996 եւ 2000 թականներին նա ճանաչեց Հայաստանի լաւագոյն Ֆուտբոլիստ: 1989-ից առ այսօր ընդմիջումներով հանդէս է եկել «Շիրակի» կազմում: Հայաստանի հաւաքականում անցկացրել է 49 խաղ, նշանակել 7 գոլ: Արթուրն իրաւացիօրէն համարում է Ուկրայինայի գծով մասնագետ, քանզի բոլորից շատ (3 անգամ) նրա հարածներից տուժել է հենց այդ երկրի հաւաքականը:

«Հայոց Աշխարհ» օրաթերթ (Հասպատմներով)

Ստացւած գրութիւն

Հիմնական Նորոգութիւններ Ս. Թադէի Վանքում



Ինչպէս յայտնի է մեր ուխտատու հաւատացեալներին, Ատրպատականի Հայոց Թեմի պատմական Վանքերի Ուխտագնացութեան Գործադիր Յանձնախումբը, հիմնրւած 1994 թ.ին, Թարիզում, Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գեորգ. Ս. Նշան Ծ. Վարդապետ Թօփուզեանի եւ օրայ Թեմական Խորհրդի հաստատումով, տարւան բոլոր եղանակներում ներկայութիւն է Ս. Թադէի Վանքում:

Յանձնախումբը շնորհիւ Թարիզեցի համայնքի եւ արտերկրում ապրող Թարիզեցիների նիւստութեան եւ հաւատքին, անցեալ տարի մեծ յաջողութիւն արձանագրեց *ուխտագնացութեան վրանների* հարցը բարօք լուծելու, որով ամբողջութեամբ 102 նոր վրաններ կարեցին, 55 վրաններ նորոգեցին եւ 2000 թ. ի երէքօրեայ ուխտագնացութեան ընթացքում արդէն իսկ օգտագործեցին: Այդ աշխատանքը շարունակում է, քանզի որ համայնքի նիւստութիւնները դեռեւս շարունակում են: Յոյսով ենք որ յառաջիկայ տարի Ազգային Առաջնորդարանը իր սեփական 200 նոր վրանները կունենայ, շնորհիւ ժողովրդի նիւստութիւններին եւ հաւատքին:

Այս տարի, աշնան եղանակը ամենայարմար առիթը տեց Վանքի շրջափակում կատարելու երկու այլ հիմնական նորոգութիւններ: Ինչպէս պատկերում երեւում է, յանձնախումբը Նոյեմբեր ամսի կէսերին այցելելով Վանք, զիշերեքով այնտեղ, երկու օրերի տևողութեամբ Վանքի անմիջական բակում հիմնականօրէն նորոգութեան ենթարկեց կայծի եւ ջուրի եւ այլ խողովակների գետեղումը գետնի տակ, որպէսզի անցեալի դժարութիւնները այլեւս չկրկնեն:

Ինչպէս տեսնում ենք, Յանձնախումբը իր տեսական աշխատանքները շարունակում է վայելելով բարձր հովանաւորութիւնը Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գեորգ. Ս. Նշան Ծ. Վարդապետ Թօփուզեանի, ինչպէս նաեւ քաջալերանքը հաւատատու ուխտատուների:

*Դիան Գործ. Յանձնախումբի
23. ղեկաններ 2000*

Երիտասարդի համար

ԱՆՏԱՐԿՏԻՊԱՆ ՍԿԱՌԻՄ Է ՆԱԻԱՐԿԵԼ

(Գիտական Ֆանտաստիկա)

«Շար. նախքին համարից»

Պրոֆ. Ռ. Ղազարեան

Երբ Արեւը թեքում էր դեպի մայրամուտ, Ֆարիադը հոգոց հանելով ուղտին դուրս բերեց սուտերից և սանձից բռնած քայլեց Կահիրեի ուղղությամբ: «Մի քիչ քայլեմ, յետոյ կը հեծնեն», - որոշեց նա: Նա անցել էր մի կիլոմետրի չափ, երբ յանկարծ, ձայն կողմում՝ մօտ յիսուն մետր հեռու, անձայն իջաւ լայնեզր գլխարկի նման մի բան, եւ նոյնքան անձայն էլ բարձրացաւ երկինք ու ակնթարթաբառ անհետացաւ: Ամէն ինչ այնքան յանկարծակի տեղի ունեցաւ, որ շփոթած Ֆարիադին պիտի թարք, թէ դա տեսիլք էր՝ սատանայի շինած բան, եթէ չլինէր նրան սթափեցնող ու տագնապ յարուցող մի հանգամանք: «Գլխարկի» իջած տեղում ընկած էր մի փոքր, գլանաձեւ առարկայ, «Ռումբ չիմի», յանկարծ, իրար խառնուրեց Ֆարիադը եւ յաննայն դէպս, ուղտին ծնկի բերելով, պատկեց կողքին: Մակայն առարկան շարունակում էր անշարժ մնալ: Ֆարիադն արդէն սկսել էր հանգստանալ, երբ կատարեց անսպասելին: Առարկան շարժեց, թեթեւակի վեր բարձրացաւ եւ անշտապ գլորեց դեպի Ֆարիադը: Մարտափից մի պահ քարանայով եւ բարձրաձայն աղօթելով Ալլահին, Ֆարիադը ցատկեց ուղտի վրայ եւ սլացաւ դեպի քաղաք: Շրջելով, նա դատապարտածի իր հայեացքը յառում էր հաւատարիմ շան պէս իր ետեւից վազող առարկային: Ֆարիադն ստիպեց ուղտին վազել, առարկան նոյնպէս արագացրեց ընթացքը: Քանի որ ոչ մի նախայարձակ գործողութիւն չկար առարկայի կողմից, Ֆարիադը սկսեց հանգստանալ եւ դանդաղեցնելով ընթացքը, ժամանակ առ ժամանակ շրջում էր դեպի առարկան, որը հնազանդ վագում էր նրա ետեւից մի տաս քայլի վրայ: Մի մետրաչափ, թթուրատր, արծաթափայլ ինքնագնաց էր դա: Իսկ մթնշաղին պարզեց, որ նրա շուրջ երկնագոյն պսակ կայ, որով նա կարծես ակամայ ուշադրութիւն էր գրաւում:



Կահիրեի առաջին իսկ խաչմերուկում Ֆարիադն առողակով ու ձեռքերի տենդազին շարժումներով ամբոխին իր շուրջը հաւաքեց: Նա արդէն երրորդ անգամ, այս էլ արդէն իրեն մօտեցած ոստիկանին, վերապատմում էր առեղծածային արկածը՝ իրեն պոչի պէս կպած առարկայի հետ: «Մեղսարարն» այդ ընթացքում «ժամբենատար» կանգնած էր տաս քայլի վրայ, թեքեւ թրթռացնելով երկնագոյն պսակը: Առաջինը չհանբերեցին երեխաները: Ջգուշտորութեամբ նայելով առարկային, ու չդարձնելով մեծերի կանչերին, շուտով խիտ օղակով շրջապատեցին «խաղալիքը»:

«Նա ինչ-որ բան է գրում», - անմիջապէս ձայնեցին երեխաներից մի քանիսը: Ոստիկանին այլ բան չէր մնում

անելու քան թաքցնելով ներքին լարումը, մօտենալ առարկային: Համոզելով, որ վերջինից վտանգ չկայ, նա սրիտ առած բղաւեց երեխաների վրայ, հեռու քշելով նրանց: Նրան մօտեցան մեծահասակները:

Այդ ժամանակ՝ մէկը միսին ընդհատելով, երեխաներն ինչ-որ բան էին բացատրում կողքով անցնող երիտասարդին, որը՝ դատելով արտաքինից, ուսանող էր: Նա արագ մօտեցաւ, ներողութիւն խնդրելով անցաւ առաջ եւ կռուակով առարկայի վրայ, զարմացած սուլեց... Գլանաձեւ թաղանթին, առկայծող երկնագոյն դաշտի վրայ, ինչ-որ սեւ գրութիւններ էին երեւում: Երիտասարդը որոշ ժամանակ ուշադիր զննեց, ապա շրջեց ոստիկանի կողմը:

«Մա անմիջապէս պէտք է ուղարկել համալսարան: Եթէ չեմ սխալում, գրութիւնները հին-եգիպտական հիերոգլիֆներով են արւում»:

Երեք օր անց արտակարգ թողարկումները ժամանակակից լեզուով հրատարակեցին Կահիրեի եգիպտաբանների կողմից կատարած խորհրդատու տեքստի թարգմանութիւնը:

* * *

Անտարկտիդայի կայարանում Տոյկը ռադիօընդունիչից գրանցեց տեքստը եւ մի կերպ լուսացնելով, սլացաւ դեպի խոհանոց-ճաշարան, անհամբեր սպասելով աշխատակիցների հաւաքելուն:

«Ինձ թում է, շուտով դուք պար կը բռնէք,- դիմելով նստողներին, հանդիսատր կերպով յայտարարեց նա:

- Ի պատիւ ինչի՞, - մռայլ հարցրեց հաշուապահը:
- Հաղորդագրութեան պատիւն:

- Նամակնե՞ր,- վեր թռաւ Ռուզանը,- ո՞ւմ:

- Բոլորին,- խօսքը կտրեց Տոյկը,- ընդ որում շատ հեռուից:

- Տանի՞ց է,- կրկին յուրեց Ռուզանը եւ տագ արեց, յիշելով, որ ոչ մի ինքնաթիռ չի եղել:

- Խղճուկ երեւակայութիւն,- արձագանքեց Տոյկը:

Նայելով ընկերակիցների սպասողական արտայայտութիւններն, նա դադար տեց եւ ասաց.

- Որքան ես հասկացայ, Միլիուսից է:

- Պարզ է: Տղան նորից սկսեց դուրս տալ,- վերցնելով գրալը, փնթփնթաց հաշուապահը:

Տոյկը նրան պատասխանեց բազմաշարժար մօր դէմքի տանջահար արտայայտութեամբ, բոլորի ուշադրութիւնը հայեացքով հրաւիրելով իր համբերատարութեան վրայ եւ, ուղղելով թերթիկը, կարդաց, ինչպէս իրեն էր թում ձայնին արտաերկրային երանգ տալով:

«Դեղին աստղի երկնագոյն արբանեակի երբայրներ...»:

- Մոռացար յիշատակել քոյրերին,- անտաշ-ընդհատեց նրան հաշուապահը, դեռես կարծելով, թէ Տոյկը շատ է ձգձգում իր հերթական խաղը: Տոյկը յանկարծակի, իրեն ոչ յատուկ խստութեամբ նայեց հաշուապահին եւ բոլորը տեսան, որ նա խորապէս յուզած է՝ դէմքն ամբողջովին կարմրատակած:

«... Մեր վերջին այցի ժամանակ մենք համոզուեցինք, որ ձեր կացարանի առանցքի տեղաշաժը, որը մենք կատարել էինք աստղի շուրջը ձեր կացարանի 11 անգամ 1000 սլոտոյտ առաջ, տեւ է սպասած արդիւնքները...»:

Երիտասարդի համար

-Կաց, Տոլիկ: Այդ ինչ է... արդեօք խօսքը երկրի առանցքի շեղման մասին չէ՞:

Տոլիկն անհամբեր տարտերեց գլուխը և շարունակեց.«...ուել է սպասած արդիւնքները. Միասպաղաղ ապահոված զոյատետունը աւարտեց: Մեծ ջրի և կլիմայի փոփոխութեան պատճառով ցեղերը տեղից շարժեցին: Պէտք էր պայքարել ցրտի և սովի դէմ:

Ճիշտ է, մեծ ջուրը քերեց ատիլի մեծ աղէտ, քան մենք ուզում էինք, քանի որ ընդերքի ժրթումները, որոնք մենք ստեղծեցինք ձեր կացարանի երկու ծայրերում, ատիլ ուժեղ և երկարատև եղան, քան մենք կարծում էինք»:

- Ընկերներ,-յուզած ձայնեց ովկիանոսաբանը,- չէ որ նրանք խօսում են համաշխարհային ջրհեղեղի մասին...

Իսկ ի՞նչ է նշանակում «ժայթքումը կացարանի երկու ծայրերում»,- անորոշ հարցրեց Ռուզանը:

-Դէ դա պարզ է,-ասաց երկրաֆիզիկոսը և արագ ինչ-որ բան գծագրեց անձնոցիկի վրայ: Ամէն ինչ դրան էր տանում:

Եթէ մեր գնդի հակադիր կետերում, ինչ-որ տեղ միջին լայնութիւններում, բայց հասարակածը առաջացնենք, ապա կստեղծի պտտող ուժ, որը կարող է փոխել երկրի առանցքի թեքութիւնը:

-Պա՛հ, բարեգործներ,- վիրատրեց խոհարարը,- դեռ ինչե՛ր կարող էին գլխներիս կտորել:

-Եւ կտորել են,- ձայնեց Ռուզանը,- հնարատր է հենց այդ ժամանակ է տեղի ունեցել մամոնոսների համընդհանուր կործանումը: Դէ լաւ, ընկերներ, թող Տոլիկը շարունակի:

-Շնորհակալութիւն, օրհորդ,- ցուցադրաբար խնարհեց Տոլիկը և շարունակեց.

«...Անցեալ այցի ժամանակ մենք մեծ կառոյցներով շատ բնակավայրեր տեսանք այնտեղ, ուր կը նկնի մեր ուղերձը և այն ջրի շուշը, որը ձեր և վերելից ցամաքի միջև է...»

-Միջերկրական ծովն է,- հապճեալ նկատեց ովկիանոսագետը,- ներիք Տոլիկ: «...Ինչպէս նաև ամենամեծ ցամաքի միւս ծայրում...»

-Չիմաստանն է,-բացականչեցին միանգամից երկուսը::

«...Մենք սովորեցրինք ձեզ ինչպէս հաշարկել պատկերները,- աշխատել մետաղի հետ, տուփերի մէջ փոքրիկ կայծակներ ստանալ...»- գալստական էլեմենտը,- ինքն իրեն ընդհատեց Տոլիկը և շարունակեց. «Բայց ցաւօք, հեռաւոր ցամաքում կեսանքը դադրեց այն ծածկեց պինդ ջրով...»

- Անտարկտիդան է...- բղաւեցին մի քանի ձայներ: «այդ ցեղի սպիտակ եղբայրները մօտակայ ցամաքի վրայ տեղափոխեցին...»

- Հարաւային Ամերիկա...- համընդհանուր բացականչութիւն...

«...բայց յետոյ անհետացան... Մենք ցաւում ենք... չի վերձանած,- ուղարկում ենք մեր մետաղեայ բարեկամներին...»- ռոբոտներին (դիտողութիւնը թարգմանիչներինն է)- պարզաբանեց Տոլիկը»:

«...որպէսզի վերացնենք պինդ ջուրը...».

-Շա՛տ շնորհակալ ենք, բարեգործներ,-սրտնեղած արտաբերեց խոհարարը:

«Բայց»- Տոլիկը բարձրացրեց ձայնը,- «Եթէ ծառաները տեսնեն, որ դա վատ է և դուք դէմ էք, նրանք կը գնան: Այսինքն, դուք պատրաստ էք սովորել մեզմիջ: Եւ արդ ժամանակ մենք կը գանք, կըսովորեցնենք ձեզ մտնել բարձր տիեզերքի մէջ, որտեղից դուք անմիջապէս կընկնէք ուրիշ տիեզերքների մէջ, ինչպիսին ձերն է: Դուք կը տեսնէք, որ նրանք շատ են և զոյգ իրար նման...»- նորից վերձանած չի «չի կարելի ընկնել նմանի մէջ կանհետանալ...»

- Չնորամտութիւն է,- հիասթափեց Տոլիկը:

- Արի ու տես, որ որոշ բան կարելի է հասկանալ,- խօսեց մինչ այդ լուռ Ֆիլկոսը:- Այլաբանօրէն շարադրուած է ատիլ բարձր չափողականութեան տիեզերքի մէջ անցնելու միտքը, որից կարելի է ընկնել մերի նման երեք չափանի տիեզերքների բազմութիւնից ցանկացածի մէջ:

- Իսկ ի՞նչ անհետացման վտանգի մասին է խօսքը:

- Ըստ երեւոյթին, խօսքը տիեզերքի և հակատիեզերքի կողմից միմի փոխոյնչացման մասին է:

- Ուրեմն, այնտեղ ապրում են մեր կրկնակները,- անհանգստացաւ Ռուզանը:

- Հազիւ թէ այնտեղ ճշգրիտ հակա- Ռուզան կամ հակա-Տոլիկ գտնուի, քանի որ մոլեկուլների աներեւակայելի բազմութեան աշխարհում իշխում պատահականութիւնը: Բայց ընդհանուր գծերով, մնանութիւն հնարաւոր է:

- Այդ բոլորը կարծես հրաշք լինի...- երազկոտ ծոր տեց Ռուզանը:

- Դէ ինչ, սպասենք Ուսուցիչներին,- եզրահանգեց Տոլիկը:■

Քուտիրկա, 1989 թ.

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	ա	ն	դ	ր	ա	ն	ի	կ	օ	զ	ա	ն	ե	ա	ն
2	բ	ա	մ	ա	դ	ա	ռ	ր	զ	ա	ր	կ			
3	ա	զ	ա	տ	ա	մ	ի	տ	բ	ա	ւ	ա	ի		
4	բ	ե	կ		մ	ա		կ	ա	ն	ա	ն	ո	զ	
5	է	լ		մ	ա	կ	ա	ն	ռ	ն		հ	ե	ր	
6	կ	ի	ս	ա	ն	ա	պ	ա	տ		բ	ա	լ	ո	ն
7	իւ		ա	ր	դ	ն	ա	հ	ա	ր		ն	ի	ն	ա
8	ն	ե	ր	կ		ի	ր	ա	կ	ա	ր	զ		ռ	ր
9	կ	ա	դ	ե	տ		ա	տ	ե	լ		ի	ա	մ	մ
10	ո		ա	դ	ա		տ	ա	լ		ա	ս	տ		ա
11	յ	ա	ր		դ	ա		կ		պ	ա	տ	ե	ա	ն
12	ե		ա	ն	ա	ր	զ		ա	լ			ա	ր	ա
13	ա	ս	պ	ա	ր	է	զ		դ	ի	ա	զ	ն	ո	զ
14	ն	կ	ա	ր	ա	զ	ի	ր		տ		ն		ս	ա
15		ա	տ	է	ն		ր		ս	ա	ն	ա	հ	ի	ն

Համար 12-ի խաչքառի լուծած տարբերակը